



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99.09

T-82

891.99.09

6-8203

19 APR 2011

207

Ա. ՇՈՎՐԵԱՆ

ԽՈՅՏ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

416052



Վենեսի

Կ 8 Պ Ա Ր Ա Կ Ի Մ Կ Ե Թ Ո Ր Ե Ա Ծ Բ

4902

15 JULY 2013

64. + 60

891.38.09 parfum
8-82 Specimen
Snuffbagg Aug 20 1992
Wm
S.A. 6617 12/09/92

22150.59

ՅՈՒՆԻՍ. Ա.Ռ.ԶԻՆ

Ա Յ Ս տարի Մոսկվայի կայսերական
Հնագիտական ընկերութիւնը լոյս ընծայեց
հետեւեալ երկու աշխատութիւնները՝

и. Древности. Шруды Императорского Московского Археологического Общества, изданные подъ редакціей В. Шрутовскаго, секретаря Общества. Шомъ XVIII. Москва 1901 г. № 15.
Հնութիւնք. Մուկվայի Կայսերական Հնագիտական ընկերութեան երկերը, հրատարակուած ընկերութեան քարտուղար Վ. Տրուտովսկու խմբագրութեամբ. հատոր XVIII-ր. Մուկուս 1901 թ.: Այս քառածալ զիրքը բաղկացած է 311 էջից և բովանդակում է իւր մէջ հինգ յօդուածներ զանազան հնախօսական նիւթերի մասին. ապա հետեւում

Են ընկերութեան 1896–1899թ. գործունէութեան վերաբերեալ արձանագրութիւններ : Դոցա մէջ հայկական հնութիւնների բաժինը չափազանց սուր է . այն էլ Խ . Յովհաննիսեանի մի յօդուածն է , ուր հեղինակը նկարագրում է Փիշնեվի Հայոց առաջնորդարանի ատենագլիք՝ Կարապետ Յովհաննիսեանի չորս հին Հայոց ձեռագիրները , որոնց երեքը Աւետարաններ են , իսկ չորրորդը – Խորհըրդատերութեանը :

ա . Աւետարան բոլորագիր , թղթի վրայ , երկու սիւնեակ , թերթերի թիւն է 330 , 25 × 18 և ամեն մի էջը բաղկացած է 18 սուղերից . ձեռագրիս սկզբում ըրջանակների մէջ Եւսերիսի կանոններն են , նոցանից բարձր – ծաղկեայ նկարներ . իսկ երկու կողմից – կաքաներ . ապա հետեւում են զարդարուն սիւներ ամաններով և պէսպէս թուշունների ու գաղանների նկարներ : Աւետարանիչների մանրանկարները պակասում են , խորանները սովորական ոճով են . մտնր զարդարանքների մէջ երբեմն պատահում են յաւերժահարսունք սրածայր զլիսարկներով , խաղեր , խորանարդ աշտարակներ : Բոլոր զարդերը ու նկարները միայն գծագրուած են , բայց ոչ բոլորովին նկարուած . ուստի տեղիք են տաւ

լիս ենթագրելու , թէ բուն զբչագիրը ԱՎԴ դարու գործ պիտի լինի (յիշեալ դարում , ինչպէս յայտնի է , Հայաստանը յարատեւ պատերազմների ասպարէց էր դարձել երկու թուրքմէն՝ այն է՝ ԱԿ-Քօյունլու և ԿարաՔօյունլու ցեղերի երեսից) : Զեռագրի վերջում կայ մի կարճառու յիշատակարան , որից երեւում է , որ աւետարանս նորոգուած է և կազմուած Հայոց ՄՃԶ թուականին (1657թ.) :

բ . Աւետարան բոլորագիր , երկու սիւնակ , բաղկացած 282 թերթերից (թուղթ) , 18 × 13 և իւրաքանչիւր էջը – 23 տողից : Աւետարանիչների մանրանկարները , բացի Մարկոսից , բանում են ամբողջ էջը . մնացեալ նկարները ու զարդերը թէ և վատ չեն , սաւկայն շքեղ էլ չէ կարելի համարել : Զեռագրիս յատկութիւնը նայելով , թւում է թէ , գեռ մօտաւորապէս ԽVI դարու զբչագիրներին է պատկանում :

գ . Աւետարան գեղեցիկ բոլոր զբով , երկու սիւնեակ , թղթի վրայ , բաղկացած 326 թերթերից $10\frac{1}{2}$ × 8 : Զեռագրի սկզբում ուրոյն մագաղաթեայ թերթերի վրայ կան իննը մանրանկարներ Քիսասոսի երկրային կեանքից , ապա զալիս են Եւսերիսի կանոնները , պէսպէս զարդեր , թուչունների ու կենդանիների

Նկարները: Ասգաղաթեայ թերթերը, թուով 19, ինչպէս երեւում է, օտար ձեռագրից են առնուած. և նոցա նկարների ներկը գունատ է ու շիջած, մինչդեռ միւս նկարների գոյնը թարմ է ու պայծառ: Վերջում ունի յիշատակարան, որից ակներեւ է, զրչագիրը գրուած է 1644 թ. Ապահանի Շօշ գաւառում (Պարսկաստանի) ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի Նարըմ-Կալայի եղեքում. որբարդողն է ոմն Գասպար երէց:

Դ. Խորհրդատեար՝ բոլորագիր, թղթի վրայ բաղկացած 20 թերթից, 28 × 20, իւրաքանչիւր էջը 23 տողից: Սկզբում կայ մի բարդ մանրանկար, որ պատկերացնում է եկեղեցու ներսը, ապա մի գեղեցիկ խորան ծաղկեայ նկարներով զարդարած. բոլոր էջերը շրջանակեալ են: Յիշատակարանից մենք տեղեկանում ենք, որ զրչագիրը գրուած է Հայոց Ռձկ Թուականին (1711 թ.), Փոքր Ասիոյ Թոփսաթ քաղաքում. որբարդողն է Եղիայ, Սուրբ Բարսեղի եկեղեցում:

Տ. Հնագիտական ընկերութեան երկրորդ հրատարակութիւնն է՝ Ճրենու Վոտչունա (III. II Վալ. II). Ռուսական աշխարհագրութիւնը կազմակերպութիւնը է՝ Ճրենու Վոտչունա (III. II Վալ. II).

Совмиссіи Императорскаго Московскаго Археологического Общества. Изданые одъ редакціей М. Никольского и С. Кипу-
каро. Москва. 1901 (Որեւելեան Հնու-
թիւններ. Մոսկվայի Կայսերական Հնագի-
տական ընկերութեան Արեւելեան Յանձնա-
խմբի երկերը, հրատարակուած պ. պ. Նի-
կուսկու և Ալուցիու խմբագրութեամբ. հատ.
II, պրակ II, Մոսկվա 1901 թ.):

Այս հատորը, բաղկացած 198 էջերից ու
4⁰, բովանդակում է իւր մէջ հետեւեալ յօ-
դուածները, վերաբերեալ հին Հայոց գրա-
կանութեանը.

ա. Բարոն Ռ. Շտակելբերգի. Իրանական
ազգեցութիւնը հին Հայոց կրօնական հաւա-
տալեաց վրայ:

բ. Արտէն Վ. Կլթճեանի. Հին քաղաք
Astuhini (Աստահանա):

գ. Գր. Խալաթեանցի. Հին Հայաստանի
քանի մի աշխարհագրական անունների մա-
սմբն՝ համաձայն Վանի բեւեռագիր արձանա-
գրութիւնների:

Ա. Խուճեաւեւ գալիս է Յանձնախմբի գոր-
ծունէութեան արձանագրութիւնը, ուր ի մի-
ջև այլոց կան հետեւեալ յօդուածներ՝

Ա. Արտէն Վ. Կլթճեանի Երեւանի և

Ղարսի նահանգների հին յիշատակարանները
և գերեղմանները :

Բ. Պոթ. Կօրչի. Կամենից - Պոդոլկի
Հայոց դատավառական մատեանները թա-
թարաց լեզուաւ, պահուած Քիեւ քաղաքի
կենդրոնական դիւանատանը. (քաղուածք Խ.
Յովհաննիսեանցի) :

Գ. Խ. Յովհաննիսեանցի. 4. Հին Հայոց
զրչագիրներ - Աբգար Յովհաննիսեանի ժո-
ղովածուցից :

- 2. Հոփիսիմէի վանքի արձանագրու-
թիւնները Վաղարշապատում:

- 3. Մնացորդաց բնագիրը Լազարեան
Ճեմարանի հրատարակութիւն :

Գ. Պոթ. Միլերի նկատողութիւնը Գր.
Խալաթեանցի հետեւեալ յօդուածի առթիւ.
Fragmente iranischer Sagen bei Grigor
Magistros.

Ե. Գալուստ Տէր - Ակրտչեանի - Շահ-
րեարի բեւեռագիր արձանագրութիւնը :

Զ. Լ. Մոերեանցի - Ֆրիդրիկոս Միլերի
յիշատակին :

Է. Գր. Խալաթեանցի - 1). Մար-Ա-
բասի ժամանակագրութիւնը 2). Զհրատա-
րակուած անվաւերականք Մ. Եմինի թարգ-
մանութեամբ :

3). Հին Հայաստանի քանի մի աշխար-
հազրական անուններին նուիրեալ զեկուցման
քննադատութիւնը (նիստի միջոցին) :

4). Ն. Մար Մ. Խորենացու քննութեան
մասին :

ՅՈՒԽԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Վերոյիշեալ յօդուածներից ամենամեծն Պ.
Շտակէլբերգին է՝ բաղկացած 39 էլերից:
Խոռենք գորա բովանդակութեան էական կէ-
տերի մասին :

« Հին Հնդիկները և Յոյները, ինչպէս կա-
րելի է դատել մեզ հասած տեղեկութիւննե-
րից, ասում է բարոնը, պաշտում էին բնու-
թեան տարերց զօրութիւնը. Հաւանտկան է
կարծել, որ նոյնն էր նաեւ միւս հնդկաներու-
պական ազգերի հաւատալիքը, որի վերանո-
րոգման համար գիտնականները ոչ սակաւ
ճիգն են թափել, զիմելով համեմատական լի-
գուաղիսութեան մեթոդին՝ գիտութեան ոյն
ձիւղի ուսումնականութեան միջոցին: Սակայն
համեմատական գիցարանութեան շնորհիւ
ձեռք բերած արգասիրը շատ գէպքերում
տակաւին թերի է մնում:

Բայց առհասարակ տեղիք կայ ենթադրելու, թէ Հնդկաեւրոպացի նախաժողովուրդը երկրագուշթիւն էր տալիս բնութեան ոյժեւրին: Մեր նախնիքը, մեր օրերի վայրենի ցեղերի նման, դիմում էին իւրեանց չառտուածների օգնութեանը, երբ թշնամիները կամ վայրի գաղանները յարձակվում էին նոցա գիւղերի ու անասունների հօտերի և երամակների վրայ, կամ բնութեան չար պատահարների ժամանակ, երբ քանի մի ժամուայ միջոցին նոցա լաւագոյն յոյսերը կարող էին դերեւ ելնել: Միւս կողմից նաշխաջրհեղեղեան հնդկաեւրոպացին դիմելով իւր չաստուածներին, խնդրում էր շնորհել իրան երկնային և երկրային բոլոր բարիքները: Բայց Հնդկաեւրոպացւոց այսպիսի միամիտ վերաբերութիւնը բնութեան ոյժեւրին, զանազան ցեղերի բաժանուելուց յետոյ, հարկաւ չէր կարող յարատեւել հաւասար չափով առանձին և ուրոյն ցեղերի մէջ: Նատակեաց կեանքը և կուլտուրայի աստիճանաւոր գարգացումը, որ յառաջ էր գալիս ժագումով օտար և զարգացմամբ բարձր ազգերի ընդհարումից, կամաց կամաց այլ ուղղութիւն տուին խորհելու եղանակին և կրօնական հաշեացքներին: Այդպիսի զարգացումն կարելի

է տեսնել հին Հնդկաստանում, ուր Ոփդվեդայի կրօնը, հոգեւորականութեան և հասարակաց կեանքի բարդ պայմանների ազգեցութեան ներքոյ, տակաւ տակաւ ընդունում է սիստեմատիֆական վարդապետութեան ձեւն:

Հնդիկների մերձաւոր ազգականները – իրանացիք, որ պատկանում են Հնդկա-Եւրոպական ազգերի նոյն արիական ճիւղին, իրանց կրօնական զարգացմամբ խիստ տարբերվում են առաջիններից: Մինչդեռ Հնդկական Արիացիք, նոււաճելով Հնդկաստանի վայրենի ցեղերին, կարող էին ինքնուրոյն կերպով զարգացնել իւրեանց ժողովրդական ոյժերը, շնորհիւ նոր տիրապետած երկրի աշխարհազրական դիրքի իրանացւոց այլ բախտ վիճակուեցաւ: Գալով իրանց այժմեան հայրենիքը, նոքա շուտով պիտի ընդհարվէին զրացի ազգերի հետ, որոնք կուլտուրական տեսակէտից բարձր էին կանգնած նորեկներից: Այդ ցեղերը պատկանում էին սեմական տոհմին, որ նշանաւոր ազգեցութիւն ունեցաւ հին աշխարհի կուլտուրայի զարգացման սոաջին սաղմերի վրայ: Յիշեալ ցեղերը վաղ ժամանակից ներմուծելով իւրեանց կրօնական սիստեմի մէջ վերացական գաղափարներ,

մեծ ազդեցութիւն ունեցան իրանական կրօնի վարդապետութիւնների յառաջանալու վրայ (I. Darmestèter, Le Zend-Avesta. Paris 1893. Spiegel, Arische studien, Avesta). Զրադաշտը, իրանի կրօնի յեղափոխիչը, իւր վարդապետութեան մէջ մտցրեց ոչ սակաւ սեմական տարրեր. իսկ Տարարի, որ Պարսկաստանի հնագոյն պատմութեան ամենանշաւոր աղբիւրներից մինն է, ուղղակի պնդում է, թէ Զրադաշտը Երեմիա մարգարէի աշակերտներիցն է, բայց յետոյ իւր խարէութեան պատճառաւ մերժուեցաւ նորանից: Ի դէպ է նկատելու, որ սեմական ազդեցութիւնը նըւմարում է նաև Աքեմենեաց կրօնի վրայ, որ երեւում է Անահիտ դիցուհու յիշատակութիւնների մէջ:

Արդ՝ կրելով իւրեանց վրայ սեմական խիստ ազդեցութիւն կրօնի տեսակէտից, իրանացիք եւս իւրեանց կարգին բաղմակողմանի և բեղմանոր ազդեցութիւն գործեցին իւրեանց հարեւան և նուաճեալ ազգերի վրայ: Այլապէս չէր կարող լինել: Տակաւին Աքեմենեաց Պարսիկները տիրապետուեցին, համարեա, ամբողջ Առաջաւոր Ասիային և մինչեւ այսօրս վերջնիս քանի մի ազգերի լեզուները ու

վարք ու բարքը պերճախօս կերպով մեզ աւանդում են Պարսից տիրապետութեան մասին իրանց վրայ:

Այդ ազգերի թուումնէր նաեւ Հայոց ազգը, որ թէ իւր լեզուի, թէ իւր կեանքի քաղաքական և կրօնական կազմակերպութեան մէջ անդրադարձնում է այն սերտ կապը, որ երկար դարերի ընթացքում գոյութիւն ունէր իրանի և գորա հիւսիսային դրացիների մէջ: Հայոց զօրավարները և ինքնակոչները յիշուում են Պարեհ Առաջնի օրերում Բհէճեստանի բեւեռագրերի մէջ, ընդ սմին նոցանից մէկի անունը՝ Պարարշիշ՝ պատահում է նաեւ իրրեւ մի պարսկի անուն:

Սակայն այն տեղեկութիւնները, որ ժանօթացնում են մեզ Պարսից և Հայոց յարաբերութիւնների հետ, ակնարկում են լոկայն իրողութեան վրայ, թէ Հայերը քաղաքական կախումն ունէին Պարսիկներից: Թէ ո՞րչափ էր Պարսկական կուլտուրայի և կրօնի աղեցութիւնը Հայոց կրօնական և հասարակական կեանքի վրայ այդ ժամանակ, դժուար է մի որոշ գաղափար կազմել: Նոյնը կարելի է ասել դիագոգոսների (διάδοκος) այսինքն յաջորդների և Աելեկիացւոց տիրապետութեան մասին Պարսկաստանի վրայ.

միայն երբ Պարսկաստանում հաստատւում է
Արշակունեաց հարստութիւնը, մենք ձեռք
ենք բերում աւելի լիակատար նիւթեր մեզ
հետաքրքրող խնդրի լուծման համար։ Եւ ո-
րովհետեւ մենք չգիտենք, թէ ո՞ր ժամանակ
Զբարաշտի վարդապետութիւնը հաստատուե-
ցաւ Պարսկաստանում, ուստի հնարաւորու-
թիւն էլ չունինք գէթ ի մօտոյ որոշել իրա-
նական կրօնի ներմուծելն Հայաստան։ Այդ-
պիսի հանգամանքներում պիտի շատանանք
Ստրաբոնի վկայութեամբ, թէ նորա ժամա-
նակ, այն է՝ առաջին դարում նախ քան
զՔրիստոս, Հայերը արգէն ընդունել էին
Պարսկի կրօնը։

Հայոց հնագոյն կրօնի մասին, յառաջ քան
Պարսկի կրօնի մուտքն Հայաստան, մեզ շատ
քիչ բան յայտնի է։ Հայոց բուն շաստուած-
ների կարգում կարելի է դասել Ամանորին¹,
նոր գարու Ոգուն - Առէզներն եւս պաշտուում
էին հին Հայերից։

Հանգուցեալ Առ. Էմինի երկասիրած «Հե-
թանոս Հայոց կրօնն ու հաւատալիքը» մենու-

1. Տպագրական սխալ համարելու է անշուշտ,
Սմանոր Ըմանոր բառերը, որ հեղինակի կող-
մից անաես է առնուած. Առ. Շ.։

զրութիւնից անցել է իրեսուն տարի և այդ
միջոցին լոյս տեսած Լազարդի, Ք. Պատ-
կանեանի, Հիւրշմանի և այլոց երկասիրու-
թիւնները նորանոր նիւթեր մատակարարե-
ցին առաջիկայ խնդրի ուսումնասիրութեան
համար։ Էմինը նոյնպէս սերտ կապ էր տես-
նում չեթանոս Հայերի կրօնի և զբաղաշ-
տականութեան մէջ, սակայն միւս կողմից
նա ժիստում էր իրանական շաստուածների
փոխառութիւնը Հայաստանում և առհասա-
րակ հակումն էր ոյց տալիս Գրիմի զիցա-
բանական դպրոցին, որ փոխառումներ թոյ-
լատրում էր գիցարանութեան դարերում ա-
ւելի փոքր չափով, քան թէ մեր ժամանակի
ուսումնականները։

Այսուհետեւ բարոնը խօսում է այն իրա-
նական ծագումն ունեցող չաստուածների մա-
սին, որոնք ընդունուած են Հայոց պանթէօ-
նում։ Նոցա մէջ առաջինն է Անահիտ. (Հա-
մեմատ. Լազարդ. Armen. Studien. Առ.
Էմին. Հիւրշման - Armenische Gramm.
էջ 18)։ Արդէն Ստրաբոնը գիտէր, թէ այս
Հայկական դիցուհին պարսկական ծագումիցն
էր, ուստի կասկած չէ կարող լինել, որ ոչ
միայն ոյցն դիցուհւոյս անունը, այլ և այն
կցկտուր տեղեկութիւնները, որ մեզ հասել են

նորա պաշտօնատարութեան մասին, բոլորն
էլ փոխ են առնուած Պարսիկներից. դորա
վրայ ակնարկում է նաև Վինդիշմանը իւր
այս գրուածքում։ Die persische Anahita
oder Anaitis. վասն զի Անահատին յատկա-
ցրած մակդիրներն Ագաթանգեղոսի մօտ –
«մեծ տիկին», «Անահատ տիկին», համա-
պատասխանում են ավեստական – Ardvi
Sūra Anāhitā և Պարսից Ardvi Sūrī Bāvō
մակդիրներին։ Ծանօթութեանց մէջ պ. Շտա-
կելբերգը ի գէպ նկատում է, թէ Anāhita
անունը իրանական լիդից բաւարար կեր-
պով չէ բացարում. այս պատճառաւ շատ
հնարաւոր է նորա ոչ իրանական ծագումն
(գուցէ սեմական լինի)։ Sensenը մօտեցնում
է Անահատին բարիլնեան Anunita – Istarին։
(Հետեւում են Անահատին վերաբերեալ զա-
նազան քաղուածքներ Ագաթանգեղոսի պատ-
մութիւնից)։ Ալզրում Ardvi Sura Anāhi-
taն ջրի դիցուհին էր, ինչպէս երեւում է
Եասնայում (Ясна, Йасна) դորան նուիրեալ
զիլից. բնական է, որ այդ հանգամանքից
են յառաջացել Անահատի մակդիրները Ագա-
թանգեղոսի մօտ։ Զրի կենդանացուցիչ, մա-
քրող և առհասարակ բարերար զօրութիւնը
աւելի զգալի է երկրագործին և հովուին Ա-

րեւելքում, քան Եւրոպայում։ Արդէն Ավիս-
տայում (համ. Ardvi sūr կամ Abān Տաշտ)՝
Իրանի առասպելական կիսաստուած թագա-
ւորները պաշտօն են մատուցանում։ Anāhi-
ta-ին, հայցելով նորա բարեխօսութիւնը իւ-
րեանց խաղաղ կեանքի և պատերազմական
գործողութիւնների միջոցին։ Անահատական
մեհեանների վրայ բարոնը կանգ չէ առնում.
յայտնի է, որ դոքա զտնւում էին Երիզայ
աւանում, Արտաշատում և Աշտիշատում։
Հայոց Անահատին զոհեր մատուցանելու եղա-
նակն էլ իրանական գրոշմ է կրում իւր վը-
րայ. «հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի
պսակո և թաւ ոստա ծառոց՝ նուէրս տարցի
բագնին Անահատական պատկերին» (Ագաթ.)։
Այդ պսակները և ծառերի թաւ ոստերը, ոչ
այլ ինչ են, եթէ ոչ «Baresman» (le Bor-
som, symbole de la nature végétale. Darmestéter le Zend – Avesta, I pag.
LXXXV), որ զին Իրանացիք գործ էին
ածում կրօնական ծիսակատարութեան մի-
ջոցին և յիշում են Ավեստայում զոհաբե-
րութեան առթիւ ի պատիւ Ardvi sūra Anāhita գիցուհոյն։

Բ. Արամազդ (համեմ. Lagarde, Ges.
Abhdl. Húbschmann, Arm. Gram. I, 24

-25) = Հին Պարսից Աւրամազդā, ավեա-
տական Ahurē Mazdao, արշակուն - պեհ-
լեւ Շարմազդ, սասանակ-պեհլեւ . Խօ-
միզդ (‘Օքալէսծաչ, ‘Օքալէսծղյէ) Հին Հայոց
ժայրագոյն երկնային չաստուածն է : Նորան
կոչում են մեծ և արի Արամազդ, արարիշ
երկնի և երկրի (Ա.գաթ.) և բոլոր չաս-
տուածների Հայր . « Եւ անդ կործանէին
զրագինոն եւս դիցն Արամազդայ՝ Հօրն ա-
նուանեալ դիցն ամենայնի » : Նորա զաւակ-
ներն են՝ Անահիտ և Միհր . . . որ (Անահի-
տը) մայր է ամենայն զգաստութեանց, բա-
րերար ամենայն մարդկան բնութեան, և
ծնունդ է մեծին արւոյն Արամազդայ . « ապա
զայր Հասանէր ի Միհրական մեհեան անուա-
նեալ որդւոյն Արամազդայ » . (Ա.գաթ.) : Դար-
ձեալ նոյն Հեղինակը Արամազդին վերազրում
է « լիութիւն պարարտութեան յարոյն Ա-
րամազդայ » : Այս բոլոր յատկութիւնները
ու մակդիրները թէեւ համառօտ կերպով են
արտայայտում Արամազդի նշանակութիւնը
և գործունէութիւնը Հայոց չաստուածների
շարքում, սակայն լիովին համաձայն են հին
Պարսից Auramazda-ի և ավեստական Ahu-
ra-mazdao-ի յատկանիշ բնաւորութեանը :
Ավեստական Ahuro-Mazdao յաճախ յիշ-

ւում է իրեւ արարիչ տիեզերքի « dātā gaethānām astvaitinam¹ ».

Ahura-Mazdao-ին վերոպրեալ բազմաթիւ
ածականների մէջ Ավեստայում կան նաև՝
avanemna անյաղթ, avatanuyօ հզօր, vā-
thwyօ հօտեր պարզեւող, spananhuhao
բարեկեցութիւն ստեղծող, և այլն:

Ագաթանգեղոսի վկայութիւնը, որ իբր
թէ Անահիտը Արամազդի ծնունդ է, չէ հաս-
տատում մեղ հասած Ավեստայի բնազրից.
Ahura-Mazdao-ի դուռարը ըստ Ավեստայի,
է spenta Armaiti, «երկրի ոգին», իսկ
որդին - հուրն է. առեմշա, Ahurahe-Maz-
dao putrem - զհուր, Արամազդայ ուստր:
Եզնիկը արեւին կոչում է Խորաշետ Ալաշք-
-որդի Որմղի: Ավեստայի և հին Հայոց
այս կարծեցեալ տարրերութիւնը Արամազդի
մասին, իրրեւ բացատրում է «հօրն դիցն
ամենայնի» այն հանդամանքով, որ կամ Ա-
գաթանգեղոսը Զըռւանի փոխարէն զրել է
Արամազդ, ինչպէս կարծում է Gutschmid,
Kleine schriften, և կամ սայն դէպքում

4. Բառացիք թարգմանութեամբ այս դարձաւածքը նշանակում է «Արարիչ մարմաւոր (նիւթթական) աշխարհների»։ Մ. Շ.:



Յունաց գիցաբանութեան հայեացքները յար-
մարեցրած են հայկական պանթէոնին :

Ուշադրութեան արժանի է այն իրողու-
թիւնը, որ Ագաթանգեղոսի կողմից Արա-
մազդին ընծայած բնորոշ յատկութիւններին
ամենից մօտ են այս չաստուածի այն գծերը,
որ յիշուած են Դարեհի և Քսերքսեայ բե-
ւեազիր արձանագրութիւնների մէջ. Baga
vazrka Auramazdā hya imām bumim adā hya
hya asmānam adā hya martiyam adā hya
šiyātim adā martiyahya. «Մեծ չաստուած
իցէ Արամազդ, որ արար զայս երկիր, որ
արար զերկինս, որ արար զմարդ, որ արար
զյաջողութիւն մարդոյ» :

Պերսեպոլիսի արձանագրութիւնների մէջ
Auramazdā կոչում է՝ hya matništa ba-
yānām, «որ վեհագոյնն է դիցն», նոյն
աելում Դարեհը ազաշում է երկնային չաս-
տուածին «տոհմական դիօք հանդերձ գորա-
վիդն լինել աշխարհին Պարսից» :

Հին Պարսից չաստուած Auramazda-ի
պլիսոր յատկութիւնների յիշատակում յու-
ճախակի կրկնում է Դարեհի յաջորդների
բեւեազիրի սկզբում: Այսպիսի դիմում-
ներն առ Աստուած, ինչպէս յայտնի է, և
մեր օրերի արեւելեան հեղինակների երկա-

սիրութիւնների ներածութիւն են կազմում:
Ի նկատի առնելով Ահւամազդա-ին նուի-
րած ածականների ներգաշնակ համաձայնու-
թիւնը բեւեազիրների և Ագաթանգեղոսի
գրքում, մենք արամազիր ենք կարծելու, շա-
րունակում է պ. Շտակելրերգը, որ վերը
բերուած հատուածները հայ հեղինակից քա-
ղուած պիտի լինին այն աղօթքներից և օրհ-
ներգիրից, որոնք գործ էին ածւում Հայոց
բարձրագոյն չաստուածի պաշտօնատարու-
թեան միջոցին:

Իսկ ինչ որ վերաբերում է Արամազդ
անուան ձեւին հարկ է նկատել, թէ դա ա-
ւելի հին է պեհեւի Oh(a)rmazd և Hor-
mizd ձեւերից և պատկանում է այն իրա-
նական բառերի դասին, որոնք քաղաքացիու-
թեան իրաւունքը ստացան Հայոց լեզում
ոչ ուշ Արշակունեաց ժամանակն: Որ-
միզդ անունը գործածելով, Հայոց հեղինակ-
ները միշտ հասկանում են Պարսից չաս-
տուածն Ասսանեանց օրերի:

Գ. Արհմն (Եղիշէի և Եղնիկի մօտ Հա-
րաման, Հարամանի, Խարաման) իրանական
գիցաբանութեան չար հրեշտակն է: Թէեւ
մենք ստոյգ ցուցումներ չունինք Հարամանի
գոյութեան մասին հին Հայոց կրօնական

սիստեմի մէջ, բայց այնու ամենայնիւ, առում է բարոնը, մենք չենք կարող ուրանալ, թէ Հայերը չէին հաւատում՝ չար հրեշտակին։ Հարկաւ, ի պատիւ սատանայի երրէք մեծեաններ չէին շինուած և այդ պատճառաւ նոյա կործաններու մասին խօսք չկար երբ քրիստոնէութիւնը մուտք գործեց Հայաստան։ Հարամանի անունը չէ յիշում նաեւ Արեմենեանց բեւեռազբերումն, սակայն կառկած չկայ, որ երկուորակութիւնը արգէն տիրապետող կրօն էր Իրանում (Պարսկաստանում)։ Պարսից առաջին հարստութեան օրերում (Darmestéter, Le Zend-Avesta, է. III. էջ LXVI):

Դորանից յետոյ բարոնը բերում է Եղնիկեց զետեւեալ կտորը, որին հաւասարը տակաւին չէ գտնուած պեղեւեի գրականութեան մէջ այսինքն։ Որպէս եւս ասե՞ն՝ թէ Արշմնա ասաց, ոչ եթէ չկարեմ առնել բարի ինչ, այլ չկամիմ։ և առ ի հաստատուն զբանն առնելոյ արար սիրամարգ։

Ինչպէս յայտնի է, Եղիդինները սատանային նկարում են սիրամարգի կերպարանքով և դորան կոչում են Սա Ալա այսինքն է՝ արքայսիրամարգ։

Սիրամարգի և սատանայի յարաբերութեան

մասին աւանդում են նաեւ մահմետական հեղինակները, ինչպէս կարելի է տեսնել Ֆարիդ-է-դին-Աթթարի հետեւեալ տողերից՝

خە خە اي طاووس باغ ھشت دار سوختى از زخم مار ھفت سر

Ողոյն քեզ, ո՞ս սիրամարգ ութը դուռն (ունեցալ) բաղից, գու տոչորւում ես եօթն գլխանի վիշապի (օձի) խայթոցից։ և այն։ Ապա նոյն բանաստեղծը մի այլ տեղում պատմում է, թէ սիրամարգը, բարեկամանալով տգեղ օձի հետ, զրկուել է զրախտի երջանկութիւնից։

Դ. Միհր=Mithra Ավեստայի և բեւեապգրերի . Յունաց հեղինակների Մետρաք. Համ. Windischmann, Mithra Ein Beitrag zur Mythengeschichte des Orients. Lagarde, Gesammelte Abhandlungen. Spiegel, Avest=Übers: Ազաթանգեղոսի վկայութեամբ «Միհրական մեհեանը» Բագայառինումն էր գտնըւում։ Պարսից նոր զրականութեան մէջ արեւը կոչւում է. **رُهْم** համ. «Վիսա և Ռամին» հազներգութիւնը: Mithra չսաստուածի նշանակութեան մասին իւրանական պանթէոնում տես – Darmesté-

ter. Le Zend-Avesta չ. II: Լագարդի և
Հիւրշմանի կարծիքով Mithra բառի հին
հայացած ձեւը պէտք է ընդունել «մեհ»,
որ պատահում է Անհեկան (ամսի անուն) ==

**Կանյակ - Ֆիրդուսի, մեհեան, ամեհի բա-
ռելում:**

Միհր զրելով հայ հեղինակները միշտ հաս-
կանում են Պարսից չաստուած :

Ե. Սանդարամետ, Սպանդարամետ յիշ-
ւում է Ա. Գրքում, Ա. Խորենացու և Թոփ-
մայ Արծրունու պատմութեան մէջ: Սուրբ
Գրքում դա Յունաց Ճնջնուօչ բառի թարգ-
մանութիւնն է. Ա. Էմինը Խորենացու եր-
կրորդ թարգմանութեան մէջ «սանդարա-
մետ» բառը բացատրում է իրբեւ իշխան
ստորերկրեայ (դժոխքի): Լագարդի կարծի-
քով իրանական չաստուածութիւնը, որ հա-
մապատասխանում է ավեստական Spenta
Armaiti ոգուն, յայտնի էր Փոքր Ասիոյ աղ-
քերին եւս. գորա հետ նա կապում է նաեւ
sandan չաստուածի և Կապադովկիացւոց
օջնօքը, ամսի անունները:

Թէ որչափ ընդհանրացած էր հին Հայոց
մէջ փոխառեալ Սանդարամետ ոգին, այդ
երեւում է Սուրբ Գրքի թարգմանութիւնից:
Եթէ Ավեստական «երկրի բարի հրեշտակը»

Հայոց Աստուածաշնչում կատարում է դժոխ-
քի ոգու (չար հրեշտակի) դերը, պէտք է
կարծել, թէ այդպիսի փոփոխութիւնը տեղի
է ունեցել այնպէս, ինչպէս որ վեդական
(Հնդկաստանի գրականութեան) ձենա «աս-
տուած» բառը Ավեստայում դարձել է
«daeva» գեւ, այսինքն է քրիստոնէա-
կան կրօնի ազգեցութեան ներքոյ, որ ստոր-
նացրել է հին պանթէոնի չաստուածներին:
Հայ-պարսկական Սպանդարամետի չար
հրեշտակ դառնալուն, հարկաւ, նպաստել է
Սպանդարամետի յատկանիշ բնաւորութիւնը,
իբրեւ երկրի ոգի առհասարակ:

Պարսից գիցապաշտութեան մէջ Spenta
Armaiti համարում է ոգի առաքինութեան
և պարկեշտութեան, չատագով - ոգի ողջա-
խոհ կանանց:

Ֆիրդուսի, իւր Մատեան թագաւորաց
գրքում, հաշուելով Պարսից ամիսների ոգի-
ները, այսպէս է զրում 12դ ամսի Հայոց մասին:

سپندارمذ پاسیبان تو باد
خرد جان روشن روان تو باد

«Թո՞ղ սպանդարամետը քո պահապանը լինի

Թո՞ղ խոհականութիւնը քո լուսաւոր հոգու յատկութիւնը լինի » :

Հասկանալի բան է, որ հայ-իրանական չաստուած Սպանդարամետի դիցաբանական բնաւորութեան վերագրած իմաստութիւնը, չէր կարող հաշտուիլ դժոխային ոգու յատկութեանց հետ, մանաւանդ սուրբ Գրքի տեսակէտից :

Զ. Տիր (Տիւր. Տրէ ըստ Լազարտի): Այս չաստուածը միայն մի անգամ յիշում է Արգաթանգեղոսի պատմութեան մէջ¹, ինչպէս էլ հնչուէր նախնական ձեւն Հայոց չաստուածի - Տիր, Տիւր, թէ Տրէ, բայց, անկասկած, նա պատկանում է հին պարսկական տիր արմատին յատուկ անուանց զորօրինակ Տրօթառից, Տրօթառուս և տէրքէն ձեւը Կապագովկացւոց օրացոյցում. (Lagarde. Ges. Abhandl. էջ 260): Պրօֆ. Nöldke-ի կարծիքով այս անուան նախնական իրանական ձեւն էր տիր կամ Տիրա. այդ երկու ձեւերից շատ կանոնաւոր կերպով կարող էին

1. Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազնդհան պաշտաման Տիւր դից դպրի գետութիւն քրմացն անուանեալ դիւան գրչի Որմը զրի ուսման ճարտարութեան մեջեան:

յառաջանալ հայկականներն Տիր և Տրէ: Հին իրանական տիր կամ Տիրա չաստուածի մասին մեղ ոչինչ յայտնի չէ. բայց Nöldke իրաւացի կերպով նկատում է, թէ Պարսից անունը՝ Մերկուրիոս մոլորակի՝ **Արդէն** ակնարկում է այն բանի վրայ, որ իրանական Տիր կամ Տիրա չաստուածը հին Պարսից Պանթէոնի զիկսաւոր չաստուածութիւններից մէկն էր **Արամ** Նահիլ չաստուածների կարգում, որոնք մոլորակների նախնական բարիոնեան անունները փոխարինել են իրանականներով: Պրօֆ. Մ. Էմինը Հայոց Տիր չաստուածին տալիս է «դպիր և զրիչ» մակդիրներ, յենլով պրօֆ. Խվօլոնի զրուածոց վրայ, ուստի երեւում է, որ յիշեալ մակդիրները սեմական ծագումից են բղխում: Թէեւ մեղ չյաջողեցաւ յիշատակութիւն գըտնել Պարսից զրականութեան մէջ Տրի մասին, իբրեւ երկնքի զրողի, սակայն Տուրուշկա հարստութեան թագաւորների զրամները վկայում են, թէ ոչ իրանական ցեղերն էլ պաշտում էին Պարսից Տիր կամ Տիրա չաստուածն: Յամենայն դէպս ի նկատի պէտք է առնել, որ Տիր կամ Տրէ՝ չնայելով իւր սեմական ծագմանը, որ նպաստել է Տիր կամ Տիրա չաստուածին երկնային մոլորակների

շարքը անցնելու, մտաւ Հայոց Պանթէռնը
Պարսկաստանից, ուր և ստացաւ իւր սեմա-
կան գոյնը : Կայ մոլորակի պաշտօնը, իբրև
զրողի, յայտնի է նաեւ Պարսից բանաստեղծ-
ներին (տե՛ս «Վիսա և Ռամին» Ֆէհր-
Գուրդանի, և այլն) :

Է . Վահագն : (ՏԵ՛Ս Պատմ. Ազաթանգ .
Փ . Բիւզանդ) Ա . Գրգում ‘Երախլից անունը
թարգմանուած է Վահագն (Լագարդ.) . Հայ-
կական Վահագն ձեւին շատ մօտ է Հնդկա-
սկիւթական դրամների վրայ դրոշմած՝ Օր-
հացո ձեւն, որ, իւր կարգին, Արշակունի-
պեհլեւական ներկայացուցիչն է Ավետարյի
Verethraghna-ի . այսինքն յաղթութեան ո-
գու : Հնագոյն սասանական ձեւը հնչում էր
Varahran Օնարաջանու, իսկ յետին ժամա-
նակի սասանականը – Vahran, Ֆիրզուսի
գրում է Շառ (համ. Stein, Zoroasrian
Deities on indo - scythian coins, էջ 159) :

Եատ հետաքրքր աւանդութիւն Վահագնի
մասին մէջ է բերում Անանիա Շիրակացի
(VII. դար) որ է՝ «գարձեալ ոմանք յա-
ռաջնոցն Հայոց ասացին՝ թէ իսիստ ձմերանի
Վահագն նախնին Հայոց գողացաւ զյարդն
Բաղամայ (Բարձամայ) Ասորւոց նախնոյ,
զոր և մենք սովորեցաք բնախօսութեամբ
յարդգողի հետ անուանել » :

Այնուհետեւ բարոնը շարունակում է . մենք
մինչեւ այժմ չակնարկեցինք Մովսիսի Խորե-
նացու տեղեկութիւնների վրայ Հայոց հե-
թանոսական կրօնի վերաբերութեամբ : Ի
նկատի առնելով հայագէտների¹ սկեպտի-
կական վերաբերութիւնը այս պատմագրի
երկերին, մենք թոյլ շտուինք մեզ օգտուելու
նորա ցուցումներից մեր խնդրի մասին :

Սակայն սոյն գէպօւմ բացառութիւն ա-
նելով, մենք ամբողջօրէն մէջ կը բերենք Խո-
րենացուց Վահագնի ծննդեան նուիրեալ
երգը .

Երկնէր երկին և երկիր
Երկնէր և ծիրանի ծով
Երկն ի ծովուն ունէր
զկարմրիկ եղեգնիկն և այլն, և այլն :

Այս հատուածում կարելի է արձագանգ-
ներ տեսնել այն գծերի, որով օժտուած է
Հայոց Վահագնի նախատիպ՝ ավեստական

1 . Բարոնը այս տեղ ակնարկում է Պ. Գլ.
Խուաթեանցի «Հայկական վէպի վրայ Ա. Խո-
րենացու Հայոց Պատմութեան մէջ » . առանց
յէւելու, «ը այդ ուսումնական քննութեան
մասին տարբեր կարծիք են յայտնում Ա. Պե-
տերըուրզի Համալսարանի պրօֆ. Ն. Մառը .
Նորայր Բիւզանդը և այլք : Ա. Յ. :

Verethraghna-ն, որի վրայ արդէն մատնացոյց են եղել պրօֆ Lagarde և Fr. Müller. տես Յաշտ 14դ (Bahirām Yasht) Geldnerի հրատարակութեան :

Ապա, բարոնը մի քաղուածք եւս քերում Շահնամէից (մատեան թագաւորաց - Ֆիրդուսի). դա իրանական սպարապետ Տուսի երազն է՝

چنان دید روشن روانش ده وان
که خشنده شمعی بر امد داپ
بر شعم رخshan یکی تخت عاج
سیاوش بر این تخت باز و تاج
لبان پر ز خنده زبان چری کوی
سوی طوس کردی چو خورشید روی

(Թարգ.) «Նորա լուսաւոր հոգին երազում տեսաւ հետեւեալն՝ ջրի տակից ծագում՝ էր լուսաճաճանչ կանթեղ. կանթեղից բարձր հանգչում էր փղոսկրեայ գահը. այդ գահի վրայ բազմած էր՝ թազը զիխին՝ արքայական վեչութեամբ Ակյավուշը. նորա շրթունքները ժպտում էին, նորա խօսքերը լի էին քաղցրութեամբ. նա իւր արեւանման դէմքը դարձնում էր գէպ ի Տուսը» :

Մէջ բերելով Շահ-Նամէի ոտանաւորները,

մենք, նկատում է Պ. Շտակելբերգը, դիտաւորութիւն չունինք արձանագրելու որ և իցէ անմիջական տանչութիւն դոցա և Խորենացու հատուածի մէջ: Շահ-Նամէի ոտանաւորների մէջ առհասարակ յիշում է այն բազմաթիւ երազներից մէկն, որոնք Պարսից վէպի յատուկ բնաւորութիւնն են կազմում. մինչդեռ Հայոց պատմագիրը աւանդում է, գուցէ մասմէր կարծեցեալ¹ ժողովրդական երգ: Բայց ինչ և իցէ, երկու հատուածներումն եւս նշմարում է արեւի ծագման վերաբերեալ առասպելի հնագոյն արձագանգը: Ի գէպ նկատենք, որ Ակյավուշը իրական վէպերում հռչակում է ոչ այնքան իրրեւդիւցազն իւր սիրազօրծութիւններով, որքան իրեւ գեղեցկադէմ պատանի իւր գերբնական գեղեցկութեամբ և համեստ բարբով: Ակայն պէտք է յարել, որ ոչ համեմատական դիցաբանութիւնը, ոչ էլ Ավեստան իրաւունք են տալիս մեզ Ակյավուշին դասելու հին-իրանական չաստուածների շարքը, ինչպէս զոր օրինակ բայց այսահամար է հմա կամ

4. «Կարծեցեալ» ասելով բարոնը կը կնում է միայն Գր. Խալաթեանցի ենթադրութիւնը, որ, թերեւս ընդ միշտ ենթադրութիւն մեայ:

Ա. Շ.

իմա խշէտա Ավեստայում։ Սկյավուշի աշնունը յիշւում է ոչ իղեղների առասպելական թագաւորների թւում։ Ավեստայում նորա տալիս են մակդիրն «Zūrēšāta» ի զուրսպանուած. (տ. Յաշտ IX, 18). իններորդ Յաշտում (71) Սկյավուշը յիշւում է այն անձանց թւում, որոնք օժտուած էին արքայական փառօք (կառաջ զարդարություն)։

Իսկ ինչ որ վերաբերում է Վահագնին վերաբերեալ Հաստուածին Մովաչս Խորենացու պատմութեան մէջ, պէտք է նկատենք, որ մենք չենք ներել¹ մեզ խօսել նորա ծագման մասին, աչքի առաջ ունելով այն խիստդատավճիռը, որ նորագոյն հետազօտողները

1. Բարսնի յիշեալ խօսքերը դարձեալ ապացուցանում են, որ նա, բարսն Շատակելբերդը միանդամայն կաշկանդուած է, Գր. Խալաթեանցից վերը յիշուած Ուսումնական Քննութիւնից: Ենթադրենք մի ըսպէս, որ Մ. Խորենացին, ըստ վերջին Քննութեան, ապրել է VII կամ VIII դարում. միթէ այս հանդամանքը արդելում է նորան գրի անցնել Հնագոյն ազգային աւանդութիւններ, խօսել զոր օրինակայնապեսի Հնութիւնների վրայ, որոնց գոյսթիւնը Քրիստոսից 900-800 տարի առաջ է. (Վանի բեւեռագրերը): Մ. Շ.:

արձակել են Մ. Խորենացու մասին: Մենք միայն դիմում ենք հայագէտներին, որոնք նույիրել են իրանց Խորենացու Պատմութեան ուսումնասիրութեանը, հետեւեալ խնդրով՝ չէ կարելի արդեօք ենթագրել, որ Մովաչս Խորենացին, ծանօթ լինելով Փիլոնի և Անանիա Շիրակացու գրուածքներին, ուր Հայոց Վահագնը մօտեցրած է Ապողոնին կամ արեգական, Վահագնի անունը վերագրէր Ավեստայի՝ ստերծագործութեանց վերաբերեալ՝ այն օրհներգերից մէկին, որոնց օրինակները Հասել են մեզ Դիոն Ռոկերանի հրկերում: (Dion Chrysostomus; Համ. ZDMG 19. 51, 63 – Oratio Borysthenica (36) թ. 449 ed. Dindort.)

Բաց ի այս իրանական ծագումից յառաջացած չաստուածներից, որ պաշտում էին հին Հայերը, հայ մատենագիրներին յայտնի էր նաեւ Ավեստայի Zurvan-ը, Զրուան = պեհլեւի Zurvân, Zurvân-i-akanarak, Zurvan-i-akanar: Եղնիկը Զրուան բառը ճիշդ չէ թարգմանում «Բախտ կամ փառք», ինչպէս իրաւացի նկատում է Հիւրշմանը. այն ինչ այս բառիս արմատական նշանակութիւնն է «Ժամանակ»: Եղիշէի պատմութեան մէջ Պարսից Վզուրկ հրամանատարը Զրուանին

կոչում է «մեծն աստուած» : Եղնիկի և Եղիշեկի ասելովը՝ Որմիզդ և Արհմի համարւում էին որդիք Զրուանի, որ գոյութիւն է ունեցել աշխարհիս ստեղծագործութիւնից առաջ: Սակայն մեզ մատչելի Ավեստայի բոլոր յիշատակարաններում Զրուանը, համեմատաբար միւս չաստուածների հետ, յետին տեղն է զրաւում: Ոչ մի տեղ չէ յիշատակւում մեջեանների կամ ատրուշանների մասին, որ Հայերը շինած լինէին ի պատիւ Զրուանի:

Ավեստայում Տրվան-ակարան (անսահման ժամանակ) գեռ եւս յերեւան է գալիս միանգամայն վերացական մոռքով. միայն տակաւ առ տակաւ, երբ Պարսից կրօնը աւելի շահազրդիու ուղղութեամբ է առաջ ընթանում, կամ գուցէ, օտարազգի կրօնական սիստեմների ազդեցութեան ներբոյ, Ավեստայի գիտուն վերծանողները «անսահման ժամանակը» հայր Պարձրին երկուորական սկզբունքի (չարի և բարոյ) երկու գլխաւոր ներկայացուցիչների: Մի զրադաշտական աղանդի հետեւողները, ինչպէս յայտնի է, կոչում էին զրուանականք. այդ աղանդաւորները բարի ու շար ոգուն վերագրում էին մի բարձրագոյն, գաղափարական սկզբան:

Ի նկատի առնելով այն հանգամանքը՝ Եղնիկը, ապրելով քրիստոնէութեան և մղեղանց մոգութեան ահեղ կոփւների միջոցին շատ խիստ կերպով յարձակւում է «Զրուանի առակի» վրայ, մենք տրամադիր ենք կարծելու, թէ Հայերի մէջն եւս կային այս չաստուածի երկրպագուները: Բայց գորանով, մենք ի հարկէ, չենք կամենում ասել, թէ զրուանականների վարդապետութիւնը տիրապետող կրօնն է եղել Հայաստանում կամ Վրաստանում: Միհրներսէի յայտնի նամակը Հայերին (Եղիշէի Պատմ.) ակնարկում է այն իլողութեան վրայ, որ զրադաշտական կրօնը, հինգերորդ գարում պետական կրօն լիներով Պարսկաստանում, գաւանում էր Զրուանին իրեւ հայր Որմզդի և Արհմի, ապա ուրեմն շատ բարձր գիրք ունէր կրօնական տեսակէտից: Այդ բանը հաստատում է նաև Եղնիկի ցուցումներից: Կարելի է մինչեւ անգամ ենթագրել, որ զրուանականների աղանդը, մազեղականների աղանդի նման, կաւատ I (489-531) օրերում մի առժամանակ Պարսից զբանը տիրապետող վարդապետութիւնն էր: Յամենայն դէպս պէտք է այն եւս աշքի առաջ ունենալ, որ Ավեստաներսէ, որ հոչակուած էր Պարսկաստանում

իւր մրօնական եռանդով ու բարեպաշտութեամբ չէր կարող բնաւ հերձուածող համար մէլ Սասանեանց պալատում ընդունուած կրօնի տեսակէտից :

Բաց ի այս բարձրագոյն ոգիներից ու շաստուածներից, իրանական դիցարանութեան մէջ կային նաեւ երկրորդական ոգիներ կամքաջեր :

Զար ոգիների մէջ զլխաւորներն՝ դեւերն էին, որոնք մինչեւ ցայժմ էլ յայտնի են Կովկասեան շատ ցեղերին : Եզնիկը իւր «Եղծաղանդոց հեթանոսացն» գրքում դեւերի մասին ասում է հետեւեալն՝ «որպէս յորժամքաղաք և զիւղք աւերեսցին, և անդ դեւք բնակիցեն, և կեղծս ի կեղծս յայտնիցին, և մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եւ դեալ՝ զոմն յուշկապարիկ, զոմն պարիկ, զոմն համբարու կոչիցեն¹» իրանական դիցարանութեան դեւերը, որոնք Հարամանի արբանեակների դերն էին կատարում, ժողովրդեան յիշողութեան մէջ մեացել են հին կրօնի ան-

1. Տես. Եզնիկ Կողբացւոյ Բագրեւանդայ Եպիսկոպոսի Եղծ Աղանդոց ի Վենետիկ, 1825. էջ 98. ուր Բարոնը գրում է «կոչեցեն» ։ Փեանակ «կոչեցեն» ։ Մ. Շ. ։

Այդ դեւերը յիշուում են Հայոց գրակից թեան մէջ եւս : Մովսէս Խորենացին, էրեւս, իրբեւ աղրիւր կասկածելի է զուապատմական տեսակէտից, սակայն շատ թանկագին է Սասանեանց օրերի Պարսկաստանի ուսումնասիրութեան համար¹, մէջ է բերում Հայոց վրայ թագաւորող Շապհի այս պատասխանը Ատոմ Մոկացու նախարարին . «Դու Երթիչիր, զի ի քարինս դիւաց է շահատակել» (Պատ. գր. III. զլ. 55). Նոյն Մ. Խորենացին մեզ աւանդում է, թէ «վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, և զեւ փոխանակ եղին» (III, 61)² : Համ. նաեւ Փաւստոսի Բուզանդացու ՎԼդ դպրութեան ՎIII, զլ. «դեւ ուրեմն հարաւ ի քեզ» . (Այս խօսքերը մի աւազակին ասում են նորակինը և ընտանիքը, երբ նա մի օր տուն վե-

1. A la bonne heure, կը նկատենք մեր կողմէց : Մ. Շ. ։

2. Այս աւանդութիւնը Խորենացու պատմութեան Ա գրքի, 61դ գլխումն է, և ոչ թէ ՄԴ գլխի, 61դ զլ. Այսպիսի անճշդութիւններ պակաս չեն բարոնի յօդուածում: Գուցէ մեղքը տպարանի կողմիցն է: Մ. Շ. ։

րադառնալով, հրամայում է իւրայնոց : « Ա-
րիք կամք յազօթս, վասն զի երէց եմ » . իսկ
երէց՝ բանի ձեռնադրել էր նորա Փաւստոսի
Պատմութեան մէջ մի յայտնի խեղկատակ
Յոհան եպիսկոպոսը . Մ. Շ.) . Գալով պարիկ
անուան, շարունակում է բարոնը, դա, ան-
կասկած, իրանական – պեհեւի ծագումիցն
է . համ . Ավեստայի թարիկա, պեհ . parik,
նոր Պարսից ԾՅ² (Հիւրման . Հայ . Քեր . I.
Էլ 228, 523) :

Մինչդեռ ավեստական pairikā և պեհեւի
parik իրական սեռի դեւ են նշանակում,
ԾՅ² նոր Պարսից բանաստեղծութեան մէջ
բարի հրեշտակի դերն է կատարում, որ օժ-
տուած է զերբնական զեղեցկութեամբ : Եզ-
նիկի վկայութիւնից ճշգիւ չէ որոշում այս
ոգիների բնաւորութիւնը հին Հայոց հաւա-
տալեաց մէջ և մենք տրամադիր ենք նոցա
համարելու, պեհեւի ոգիների նման, աւելի
չար, քան թէ բարի :

Յուշկապարիկ¹ բառը այնքան էլ պարզ չէ

1. Բառ Հայկադեան բառագրքի³ ճիւտադ ցա-
մաքային, կամ ըլբային, և կամ երկակենցաղ-
առաւել մասցածին՝ լառնակ կենդանի որպէս
Պարիկիշունկ, այսինքն իշացուլ . յն . Օնօքնաւորօն
ոնօքնաւոր . որ և Համբարու, և ձիացուլ .
յն . ուուշենտաւորչ . և այլն : իսկ ըստ Եղուարդ

մեզ համար, ասում է հեղինակը . այս բառիս
երկրորդ մասն-պարիկ-բոլոր ուսումնական
քննադատների կարծիքով, նոյն է թէ նախ-
ընթաց անունն ոգիների . իսկ առաջին մասն
Հիւրշմանը համեմատում է, թէ և փոքր ինչ
տատանուելով, պարսկական Աշ, Էշ, բառի
հետ (Angelo à S. Joseph-Garaphylacium
linguae Persicae էլ 33) . Եզնիկը հետեւեալ
կերպով է նկարազում այս ճիւազներին .
« յուշկապարիկաց ասեն բնակել յաւերական,
զոր յոյն լեզու իշացուլ ասէ » : Եզնիկի յու-
շկապարիկ բառի թարգմանութիւնը – իշացուլ
– հաստատում է այն հանգամանքից, որ
Հայոց « յուշկապարիկը » Աստուածաշունչ
զրոց մէջ համապատասխանում է Յունաց
ծոչքնաւորօն բարին (Մարգարէութիւն Ե-
սայեայ գլ. 13, 34 . Մ. Խորեն . զր . II.
գլ . 63) :

Հայոց դիցարանութեան մէջ կասկածելի
է նաեւ համբարուների անուան ծագումը, որ
պատահում է Եզնիկի և Սուրբ զրոց մէջ .
(Միքիայ, Եսայեայ մարգ .) օր . զգստերաց

Հիւրմիւղի՝ Յուշկապարիկը կամ Կենտաւրոսը,
Ճներաւք յիքսինէ և յամպոյ . հրէշք մարդա-
կերպք, և միջոյ և ի վայր ձիակերպք . (տես
ծանօթ . առաջին զրոցն « Արկածք Տելեմաքայ »).
Վենետիկ, 1830 թ.) : Մ. Շ. :

Համբարեաց – ֆուշատէրան սէւրինաց . Յորայ .
30. Եղբայր եղեւ համբարուաց – ձնէլքծս
շէրօնա սէւրինաց . Երեմ . Դստերք համբարեաց
– ֆուշատէրէս սէւրինաց . Եսայ . համբարուք –
սէւրինէց . և բնակութիւն համբարեաց – նախան
լեւս սէւրինաց, և այլն :

Հին Հայերը կարծում էին, թէ « համ-
բարուաց ծնունդք գոն և մեռանին » Եղնիկ :
Դժբաղդաբար այս բառիս ճիշդ ստուգաբա-
նութիւն տակաւին յայտնի չէ : Մթենք ենթա-
դրութեամբ միայն համեմատում ենք համ-
բարուն Հայոց համբար բառի հետ (de L'a-
garde Arm. stud. էջ 82), որ նոյնպէս պարս-
կական ծագումիցն է . այս գէպքում Հայոց
« համբարու » մօտ է հին Պարսից hamba-
runa բառին, որ մօտաւորապէս նշանակում
է տան ոգի, գեւ (Ոււսաց « domoroy ») :

Եղնիկը յիշում է նաեւ ծովացուլի մասին,
որ իրը թէ կովից է ծնուել – « զոր ի կովից
եղեալ ասեն » : Այդ ծովացուլերը Պարսից
գիցաբանութեան մէջ եւս յայտնի են : Բուն-
գեհշում (Հրատար . Iusti զլ . XIV և այ-
լուր) կարդումենք՝ « ծովացուլի (ցուլ-ձուկն)
մասին աւանդում են, թէ նա ապրում է
բոլոր ծովերում . երբ նա գոռում գոչում է,
բոլոր ձկները յդանում են և ծովային բոլոր

վասակար կենդանիները ծնում են իւրեանց
սերունդները » : Այս ծովացուլը – ցավմահիկ
պեհեւի լեզուաւ – յիշում է նաեւ Ֆիրդու-
սի, (էջ 444, 190), ուր աւանդւում է Սու-
հրարի նժուգի մասին, որ իրը թէ նորա
սմբակի հարուածից սոսկաց մինչեւ անդամ
ցավմահի

خـمـمـشـ كـاوـمـاهـيـ سـتـوـدـ

Պարսիկների, Վրդերի և Օսերի կարծիքով
այդ առասպեկտական ցլի եղջիւրների վրայ
հանգչումէ համայն տիեզերքը : Վրդերը դո-
րան կոչում են ցամասի, իսկ Օսերը – « գէխ՝
խիլխէցէդ գալ » – երկիրը պահող ցուկ : Նոյն
ցի մասին յիշում են նաեւ Պարսից հետե-
ւեալ քերթողները՝ Ֆերիդ-էդդին Ատտարը
և Օմառ Խէյեամ : Ահա Ատտարի երկտողը .

چـوـنـ (ـمـيـنـ) ـرـ پـشتـ کـاوـ استـادـ رـاسـتـ
کـاوـ بـرـ مـاهـيـ وـ مـاهـيـ بـرـ موـاستـ

« Երբ երկիրը հանգչում էր ցլի կոնակի
վրայ – ցուլը ձկան, իսկ ձուկն եթերի վրայ »
Միւս բանաստեղծ – Խէյեամը կրում է՝

کـاوـپـستـ بـرـ اـسـمـانـ وـ فـامـشـ ـبـرـ ـجـوـیدـنـ
یـکـ کـاوـ دـکـرـ نـهـفـقـ بـرـ زـیرـ زـمـینـ

«մի Յուլ կայ երկնքում – անունն է Պերվին (բազմաստեղք)։ Խակ միւս ցուլը թաքչում է երկրի տակը»։ Վիթխարի ծովացերի մասին Ֆիրդուսի աւանդում է Քէյ Խոսրու թագաւորի նաւազնացութիւնը նկարագրելու միջոցին։ Թէ և ծովացլերի մասին Եղնիկի հարեւանցի նկատողութեան մէջ չէ ակնարկուած այս առասպելական կենդանիների և գին Հայոց աշխարհիս ստեղծագործութեան վերաբերեալ աւանդութիւնների առընչութեան վրայ, սակայն, մենք, այնու ամենայնիւ, կարծում ենք, թէ այդպիսի մի կապ գոցա մէջ պէտք է լինի, ի նկատի առնելով, որ ստորերկեայ ցիլ մասին աւանդութիւնը մինչեւ ցայժմ ընդհանրացած է Կովկասեան ազգերի մէջ և ի մասնաւորի Հայոց և Վրաց մէջ (առ. Erekert, der Kaukasus und seine völker էջ 207)։ Խօսելով հին Հայոց երեւակայական ոգիների մասին, Եղնիկը յիշում է նաեւ – շահապետք վայրաց. այսինքն տեղերի վերակացու դեւին, որ երեւում էր մերթ օձի, մերթ մարդու կերպարանքով։ Ազաթանգեղոսի վկայութեամբ շահապետը գերեզմանների հսկողն էր։ Այդ բառը, անտարակոյս, համապատասխանում է ալեստական Տօիթրապատի, որ նշանակում է՝ «գա-

ւառների իշխան»։ Պարսից կարծիքով հարստութիւնը և գանձերը գտնցւում են օձերի հսկողութեան ներքոյ։ Այսպէս Սադին իւր գուլիստան գրքում ասում է

بدر سر کنج مار
գանձի վրայ հսկում է օձը
کنج د ۱۵ تند و ماد بهاند
գանձը տարան նորա և օձը մնաց։

Ոգիներն «ձրչոնτεց» անուամբ պատահում են և Յունաց մօտ (առ. Chwolsohn, die Isalier II, էջ 186)։ Վրաց մօտ ոգին կոչում է «Բատօնի» (Դուքրովիս – Պատմ. պատերազմի և Ռուսաց տիրապետութեան Կովկասում II, էջ 173)։

Անցնենք այժմ գին Հայոց այն հաւատալեաց, որոնք վերաբերում են երկնային լուսաւոր մարմիններին։ Վերը մենք արդէն առիթ ունեցանք ակնարկելու Հայոց հեղինակների երկերում այն հատուածների վրայ, որոնք հաստատում են այդպիսի աւանդութիւնների գոյութիւնը երկնային լուսաւոր մարմինների վերաբերութեամբ Հայերի մէջ։ Հին Հայոց չաստուածների այսպիսի առընչութիւնը երկնային մարմինների հետ մա-

Նաւանդ պարզ արտացոլում է Աշակենի և
Տիրի վրայ:

Երկնային մարմինների անունը հին Հայոց
մօտ - որչափ հնար է դատել լեզում պահ-
պանուած տեղեկութիւններից, չէ կրում իւր
վրայ օտար լեզուի փոխառութեան կնիքը:
Արեւին երկրապագութիւն էին մատուցանում
աղանդաւորները, որ կոչում էին արեւորդիք.
այդ հեթանոսական աղանդը մնացել էր մին-
չեւ XII դարը Հայաստանում: Բայց Հայոց
յիշեալ հեթանոսների կրօնը հիմնուած էր
սեմական սկզբունքների վրայ: Պրօֆ. Խվո-
սոն այս Արեւորդոց համարում է Շեմսիէ
վարդապետութեան հետեւողներ (Die Ssa-
bier und der Ssabismus I. 292).

Հին հեղինակների գրուածքներում մենք
չենք գտնում պարզ և ճշգրիտ ակնարկներ,
որ Հայաստանի բնակիչները արեւ պաշտելիս
լինէին, բացի վերոյիշեալ աղանդաւորներից,
Զբաղաշտի հետեւողների մէջ արեւը, որին
վերագրում էին կենդանաբար և քաւիչ զօ-
րութիւն, մեծ պատիւ էր վայելում: Սասա-
նեանց հարասութեան արքայն Յագկերս Ադը
(438-457), Կամենալով Հայերին Պարսից
կրօնի դարձնել հետեւեալ հրամանը արձա-
կեց. « ամենայն ազգ և լեզուք՝ որ են ընդ

իմով իշխանութեամբ՝ դադարեսցին յիւրա-
քանչիւր մոլոր օրինաց, և միայնոյ եկեսցեն
յերկրապագութիւն արեգական, զոհս մատու-
ցանելով և աստուած անուաննելով»: (տես
Եղիշէ էջ 22. հրատ. Խ. Յովհաննիսեանց.
Մուկուա 1892):

Գալով լուսնի դերին Հայոց հաւատալեաց
մէջ, պէտք է նկատել, որ այդ կողմից մենք
աւելի բարեպատեհ պայմանների մէջ ենք:
Այս առթիւ արժանի է մեր խորին ուշա-
դրութեան Անանիա Շիրակացու (VII դար.)
ցուցումները. որ, երբեմն, ակնարկում է իւր
հայրենակիցների ժողովրդական հաւատա-
լեաց վրայ: Պրօֆ. Փ. Պատկանեանի հրա-
տարակութեան 49 էջերում Անանիա՝ խօ-
սելով լուսնի մասին, հաղորդում է մեզ հե-
տեւեալն. « բայց առաջինքն, որ ջանացան
հասու լինել նմա, այսպէս ասացին, եթէ
լուսինն տարր է սեղմ, խիտ, մաքուր, գնդա-
ձեւ, և ոչ ունի զլոյսն բնութեամբ՝ այլ հա-
զորդութեամբ յարեգականէ առեալ »: Մի
այլ տեղում նոյն Անանիան (էջ 66) ասում
է. « քանզի առաջին հարքն զլուսին դայեակ
և սնուցիչ բուսոց անուանեցին »: Այս երկու
հատուածներն էլ մաքով մօտ են Ավեստայի
հայեցուածներին: Եօթներորդ կամ Մախ

(Māx) - Յաշտում մենք կարդում ենք այս հատուածը առ յատ մա՞ղիմ raoešuš tā-paieti, mišti urvaranām zairigaonanām zaramaem paiti zemādha uzuešieiti. գա նշանակում է՝ « իսկ եթէ (արել) լոյսը տաքացնում է՝ լուսինը, այն ժամանակ երկրի վրայ միշտ բանում է ոսկեծաղիկ բոյսերի դալարը » : Ոչ պակաս հետաքրքիր հատուած մենք գտնում ենք նաև Եղնիկի « Եղծ կրօնից Յունաց իմաստնոյն » երրորդ զբքի 217 էջերում (Վենետիկ 1826) . « Որպէս կախարդաց տեսեալ ի ժամանակի հրամանաւ Ոստուծոյ զլուսնոյն արինագոյն լինելոյ զկերպարանն՝ դիւի նմանել լուսնի բարբանջեն . թէ զլուսին իջուցանիցեն » :

Հնդիկների և իրանցիների մէջ կարծիք է տարածուած , որ իբր թէ լուսինը , արեւը և աստղերը (խաւարման միջոցին) ենթարկում են դեւերի և վիշապների յարձակմանը :

1. Ավեստայի բնագրում դրուած է բայս տար. հայերն - տապիմ. մեր լեզւում դա չէզոք բայց է. մինչեւ ավեստականում - ներդործական է. ըստ Iustiի բառզբքի ներկայ անցողական եղ. 3 դէմը - տար բայից կը լինի՝ տարայէի. բարուլ փոքր ինչ տարբեր կերպով է դրում տապաւութիւն - առ յատ մա՞ղիմ raoešuš tā-paieti: Մ. Շ.:

Ֆերդոսի այդ առթիւ գրում է (Էջ 695, 234):

خو و ماه کفتی بژنک اند دست
ستاناره بکام ذهنک اند رست

« Դու կ'ասէիր թէ՝ արեգակն ու լուսինը (այլ, պարզ) գոյն են լուսունել . իսկ ասուղերը լուսին են կոկորդիլոսի բերանը » . դարձեալ .

شنيدم که دستان جادو پرست
بهر کار يازد خور شيد دست

« Ես լսեցի, թէ կախարդ Դեստանը ամենայն բանում ձեռք է մեկնում արեւին » :

« Վիսա և Ուամին » վիպասանութեան մէջ կարդում ենք՝

رسته شد ز سمت ازدها ما

որ նշանակում է՝ « աղատուեցաւ լուսինը վիշապի ձեռքից » : Պարսից կարծիքով , արեգական , լուսնի և աստղերի երկրպագուներ էին համարւում Իրանի բնակիչները նախքան Զրադաշտի կրօնի մուտքն նոցա երկիրը : Այսպէս Ֆիրդոսի աւանդում է , որ իբր թէ Վշնասպ թագաւորը իւր պալատում գրել

է Զամշիդի պատկերը , որ արեւ ու լուսին
էր պաշտօւմ :

بَرْ بَرْ ذَكَارِيَدْ جَمْشِيدْ،
پَرْسَتْ ذَدَهْ مَاهْ وَ خُورْشِيدْ رَا

Յայտնի է , որ Զրուանականների զբաղաշտական աղանդի վարդապետութեան մէջ մոլորակներին երկրպագելն առաջին տեղն է բռնում , ինչպէս երեւում է այն համառօտ հատուածից , որ բերում է Spiegelը իւր Die traditionelle Litteratur der Persen երկասիրութեան 161-166 էլերում : Ըստ Զրուանականների վարդապետութեան , որ սեմական ծագումից է բղխում , մոլորակները , համաձայն իւրեանց յատկանիշ բնաւորութեան և աղդեցութեանը մարդոց վիճակի վրայ , բաժանում են երեք դասակարգի : Բարի մոլորակներ , որ բախտ են բերում , համարւում էին՝ բաց ի արեգակնից ու լուսնից , Լուսաբերը և Լուսնթագը . իսկ չար – Կռոնոս և Հրատ խառն Փայլածուն : Յենլով Խվլոսնի հարուստ նիւթերի վրայ , Շպիզէլը կարծեք է յայտնում , թէ զրուանականների հաւատալիքները փոխ են առնուած սեմական աղբեկրից :

Ի դէպ ենք համարում Անանիա Շիրակացու երկերից քաղել երկու հատուածներ , ուր խօսւում է մոլորակների մասին . (64 , 16) . « Ասեն հեթանոսք ի սոցանէ զոմանս բարերարս և զոմանս թշուառացուցիչս , որպէս խնդրեն տանուատէրութիւնս , առէս աստեղ՝ որ է երեքշաբաթ , զոր ասեն ոչ բարւոք ճանապարհորդէին , կամ առնիցէ սկիզբն գործոյ : Փոքր ինչ յետոյ – « Նմանապէս զտանուատէրութիւնն Կռոնոս աստեղ որ է շաբաթ , զոր ասեն ամենայն թշուառութեան պատճառ » : Դարձեալ՝ (Էջ 65) . « իսկ բարերար աստեղքն են լուսնթագ , լուսաբեր , և խարդախք – Երեւակ . Հրատ » : Ապա՝ « իսկ փայլածուն հասարակաց բնութիւնն » : Երեւակի և Կռոնոսի վատ աղդեցութեան մասին մարդոց գործունէութեան վերայ Եղնմիկն էլ ասում է՝ « Որպէս թէ յորժամ Կռոնոսն յաստեղատունն մտանիցէ , թագաւոր մեռնի » .

Ֆերդոսին եւս գրում է՝

ذشیمه‌ی از او بر کشیده بلند
که ناید ز کیوان بروبر کزند

(նա տեսաւ) բոյնը , որ այնքան բարձր էր

սարից, որ մինչեւ անդամ կռոնոսից¹ էլ վտանգ չէր սպառնում նորան։ Այս մի հատուած եւս « Վիսա և Ռամին » վիպասանութիւնից։

بهم کرد امد ه خودشید باهه چو دستوری
که کوید راز باشه
رقيق هردو کشتم تیر کیوان - بدان
تابد دود پیوند پیوند ایشان

« Լուսինը մօտեցաւ արեւին, իբրեւնախարար, որ զաղտնիք է հաղորդում թագաւորին. նոցա յարեցան Փայլածուն և կռոնոսը, կարծես, այն նպատակով, որ նոցա զուգաւորութիւնը չարագուշակ երեւի » :

Վերը խօսելով վահագնի մասին, մենք մէջ բերինք Անանիա Շիրակունուց մի հատուած, ուր յիշուում է յարդագողի հետքի մասին և ցոյց տուինք այդ երկնային երեւոյթի զուգաղեղ անունը առաջաւր Ասիայի շատ ազգերի մէջ։ Աակայն նոյն Անանիայի զրուածքում կայ նաեւ մի այլ հետաքրքիր ակնարկ յարդգողի հետքի զանազան անունների վերաբերութեամբ. - « և կէսք՝ հին արեգակն ճանապարհ, և կէսք կառս երկնից. »

1. Կռոնոսը բարձրագոյն մոլորակն է:

կէսք՝ պատառումն, կէսք սպի տարեալ և կէսք յարդագողս զհետ աստուածոցն¹։ Մանաւանդ « չաստուածների հետք, ճանապարհ գէպի ի չաստուածներն, չաստուածների ճանապարհ » անունը պատահում է շատ հնդկանքուական ազգերի և թիւրք ցեղերի մօտ։ Այսպէս Արեւելեան Սիրիրի Մոնղոլների մօտ յարդգողի հետքը կոչում է տէնգէրին - օեօդու « բուրխանների կամ չաստուածների ճանապարհ », թաթարները կոչում են Հաջիմար յովի ուխտաւորների ճանապարհ, Պարսիկները - օ՛Հաջիան օ՛:

Օգտուելով գէպից բերում ենք մի հատուած Մ. կաղանկատուացու Ազուանից Պատմութիւնից, ուր աւանդւում են Հոնաց ազգի նիստուկացը և հաւատալիքները. « Քանզի կրակաց և ըրոց զոհէին և ճանապարհաց աստուածոց ոմանց երկիրպագաննէին՝ լուսնի և ամենայն արարածոց, որ ինչ թուէլ յաչս նոցա զարմանալի » . (տե՛ս Մ. Էմինի հրատ. էջ 191. Մոսկուա 1860)։ Հանգուցեալ պրօֆ. Ք. Պատկանեանը յիշեալ հատուածը այսպէս է թարգմանում. « նոքա զու-

1. Տե՛ս Ք. Պատկանեանի հրատարակութիւն էջ 66. Ա. Պետերբուրգ. 1877 թ.։

Հում էին կրակին և ջրին և երկրպագութիւն
էին մատուցանում « ճանապարհների քանի
մի չաստուածներին », նոյնպէս և լուսնին և
բոլոր արարածներին, որոնք նոցա աչքերին
զարմանալի էին երեւում: Մենք առաջար-
կում ենք, ասում է բարօնը, « ճանապար-
հաց աստուածոց » դարձուածը թարգմանել
փոքր ինչ տարբեր կերպով այն է՝ « ճա-
նապարհներին չաստուածների »: Այսպիսի
թարգմանութիւնը քերականական և համա-
ձայնութեան տեսակէտից աւելի ճիշդ կ'լի-
նէր: Իսկ այդ ճանապարհները չաստուած-
ների, հարկաւ, ոչ այլ ինչ են, եթէ ոչ վերը
յիշուած տէնողերին – օեօդոլը և mutatis
mutandis حاجيلر يولي:

Անգ մասում է մի քանի խօսք ասել ծիաշ-
ծանի մասին։ Այդ երկնային երեւոյթի մա-
սին ԱՀ դարու հեղինակ Թովմայ Արքանունին
ասում է «ծիածանդ, զոր ոմանք հուր մեկ-
նեալ յամպոյ ասացին, և որդիք տարրապաշ-
տիցն՝ գոտի Արամազդայ»։ (Տե՛ս. Հր. Ք.
Պատկանեան. էջ 19):

Ավեստայի - Եասնայում IX, գեղդնէրի հրատարակութեամբ, Հայկ (Օրիոն) աստղը բազմաստեղց գօտի է անուանում, որ Ahuramazda չորհել է Խօստա աստղաւածին.

frā te Mazdao barat pauryanīm aiwyāo-nhanem stehrpaesanhem mainyutāstem. «**քեզ բերաւ Արամազդը բազմաստեղ աստղային գոտին, կուած Ոգուց**» :

Պարսից նոր մատենագրութեան մէջ, Սաւ
դիի բուօտան երկում, ծիածանը կոչում է
«Կուս դեւի աղեղ» : Բառգրքերում
եւս կան հետեւեալ ձեւեր՝
այսինքն սատանայի աղեղ,
կման رسում,
Ոստամի աղեղ : Յսերը ծիածանը կոչում
են «Սօսլանի էնդուրէ» այսինքն Սօսլանի
աղեղ :

Իրանական կրօնի մեծ ազդեցութեան մաս
սին հին Հայոց հաւատալեաց վրայ վկայում
են մի շարք պարսկերէն ծագումից յառաջա-
ցած բառեր և դարձուածներ կրօնական կեան-
քում, որոնք քաղաքացիութեան իրաւունք
են վայելում հին հայերէնում։ Մէջ բերելով
դոցանից կարեւորագոյնները, մի կողմ ենք
թողնում մնացեալները, որ բանակը և լե-
զուագէտ ընթերցողը կարողէ գտնել Հիւրշմա-
նի Հայերէն Քերականութեան մէջ լ. Ստրադ-
բուրգ 1896 թ.

4. ԱՀԵԿԱՆ, (Հայոց իններորդ ամիսն) համապատասխանում է պեհկերի թուականի ին-

ներորդ ատր, adhār մասին, Հիւրշմանը (էջ 95). համեմատում է կի՞ն Պարսից աթրիյա-
diya ամսի հետ: Հայոց ահեկանը ըստ ձայ-
նական կազմութեան աւելի մօտ է արշա-
կունի ձեւին - աthsakān (սասանական -
պեհեւի - աhrakan, նոր պարսկական -
աձր կան):

2. ատրուշան - կրակատուն. Փաւստոսի
բուզանդացոյ Պատմ. դպր. IV. էջ 119.
հր. Պատկ. Մերուժանը ասում է «նախ ես,
ասէ, շինեցից ատրուշան յիմում տանն սեպ-
հականին, այս ինքն տուն կրակին պաշտե-
լոյ»: Ատրուշան բառի վերջին վանկը մենք
հաւասարում ենք պարուական շահ յանդին,
որ պահպանուել է Հայոց, վարդի թուփ,
բառի մէջ:

3. բագ, բագին, բագայառիճ. համ. հին
պարուկական baga; զէկդ - bagha; սիէլ.
bag; նոր-պարսկ. خوچ دا لەق بەمۇور բաغۇر-
خاնի անուններ, Ֆիրդուսիի մօտ چۈڭىش.
հին-պարսկ. bagaputhra աստուածորդի,
և այն.

4. բարսոմ¹, ճիւղեր, որ գործ էին ածում

1. Գուցէ, բարսոմունք, որ նշանակում է
զոհ բերուլ քրմի մանր գաւաղանների խուրձ:
Եղակի ձայնով «բարսոմ» մենք չենք պաշտ-

պարսկիները կրօնական ծխակատարութեան
միջոցին, ավեստական - baresman, պեհլ.
barsum, նոր պարսկ. բաշ:

5. գոմէզ - կովի մէզ. ավեստական -
gaomaenza, պեհլ. gōmēz: Մենք թոյլ կ'տանք
մեզ քաղուածօրէն մէջ բերելու այստեղ Ե-
ղիշէց մի հատուած, ուր պատահում է գու-
միզ բառը, շարունակում է բարոնք: Այս-
տեղ մենք կ'գտնենք Պարսից տէրութեան և
զրագաշտական հոգեւորականութեան վար-
մունքի յատկանից բնաւորութիւնը հինգե-
րորդ դարում, երբ ամենաձախորդ հանգա-
մանիներում Հայերին վիճակուցաւ պատե-
րազմ մղել քրիստոնէական հաւատի պաշտ-
պանութեան համար:

«Պարձեալ և կանայք նախարարացն կալ-
ցին զուսումն վարդապետութեան մոգացն:
Ուստերք և գստերք ազատաց և շինականաց՝
կրթեսցին ի հրապարակս նոցուն մոգաց:
Կարձեսցին և արգելցին օրէնք սուրբ ամուս-
նութեան զոր ունէին ի նախնեաց ըստ կար-
գի քրիստոնէութեանն. այլ փոխանակ ընդ

հել. Հիւրշմանը նոյնպէս գործ է ածում
«բարսոմունք». ուստի չգիտենք, բարոնք ո՞ր
տեղեց է քաղել «բարսոմ» ձեւը: III. 6.:

կնոջ միոյ՝ բազում կանայս արասցեն . զի
աճեցեալ բազմացին ազգք Հայոց : Դատերը՝
հարանց լինիցին , և քորք՝ եղբարց . մարք մի
ելցեն յորդոց , այլ և թոռունք ելցեն յան-
կողինս հաւուց :

Պատրուճակը մի մեռցին անյազ , եթէ յօ-
դեաց իցէ և եթէ յայծեաց և եթէ յարջա-
ռոց և եթէ ի հաւուց և եթէ ի խողաց :
Հայոք առանց քանդամի մի զանգցին . ծիրտք
և քակորք ի կրակ մի եկեցին . ձեռք ա-
ռանց գումիզոյ մի լուսացին , չնշրիք և ա-
ղուէսք և նապաստակը մի մեռցին . 0ձք և
մողէզք , գորտք և մրջմունք , և այլ եւս խառ-
նափնդոր բազմաճճիք են՝ մի կացցեն (տես
Հր . Խ . Յովհաննիսեան . Մոսկուա 1892 . էջ
50) .

6 . դժոխք . պեհլ – dōšaxv² , նոր–պարսկ .
ووزخ . զէնդ – duzah .

7 . զանդիկ – մանիքեցի աղանդաւոր պեհլ .
zandikih արար . زندی . նոր–պարսկ . زندیق
իրանական zandika բառի նախնական նշա-
նականութիւնը , հաւանական է , որ մեկնիչ
է եղել :

2 . Այս օրինակը մենք քաղաւմ ենք Հերշ-
մանից (էջ 182) վասնզի բարոնի մօտ շատ
տպագրական սլաւներ կան : Մ . Շ .

8 . զոհ . ավեստ . zaothra ; պեհլ . zöhr :
Տես Եղիշէի էջ 17 . ցլուք սպիտակօք և զի-
սաւոր նոխազօք առատացոյց զզոհս կրակի :
Մեծ Սոկրատի հայերէն թարգմանութեան
մէջ (VII դարու) պատահում է զորհ . բար-
դութեանց մէջ զորհասէր (Էջմ . հրատ . էջ
255) :

9 . թափուտ = դագաղ . Հիւրչմանը այժմ
համարում է իրք փոխառեալ բառ պեհլեւի
լեզուից . իսկ առաջ նա կարծում էր . թէ
Պարսկական ծագումիցն էր . արար . تابوت
պարս . և աֆղան – tâbüt եղիպտական –
tbt .

10 . կախարդ . ավեստ . kaxwaredha , իգ .
kaxwareidhi .

11 . հուրրակ – կրակատուն . բռնդեխէ-
չում – ātar-i-frēbāk . արարացի Շախրիս-
տանի հեղինակի մօտ աղաւաղեալ ձեւով մենք
դտնում ենք ادرخوا ، ادرچوا ، որ յետոյ
մտել է բառգրքերի մէջ և որի փոխանակ
հարկաւ պէսք է կարդալ بارچه . بارچه . Բացի դո-
րանից Եղիշէի մօտ յիշում է՝ վրամական
կրակն . պեհլ . ataxš i vahramān , ataxš i
vahram . Սերէսոսի մօտ՝ (Հերակլ կայսր) –
կործանէ և զբագին հրատին մեծի , զոր

վշնասապն կոչէին » . պեհ . Višnasp . Ֆիր-
դուսիի . اذر کشپ .

12 . հրեշտակ . պեհ . freštak . նոր—պարս .
خواشی

13 . Հրոտից , Հայոց վերջին ամիսը համ .
պեհ . fravartikān « նահանջ օրեր » . պարս .
فروردن جان فرورد کان . Մենանդրի մօտ Փօւր-
ծնաման . համ . հին պարս . — fravarti , ավեստ .
fravaši .

14 . Մեհեկանի . եօթներորդ ամիս Հայոց .
(համ . Միջրահանա Ստրաբոնի) , المهر جان کان
مه . Տարարիի մօտ :

15 . մոգ « Պարսից քուրմ » համ . մոգու-
թիւն , քուրմերի վարդապետութիւն , մոգա-
կան աղանդ . հին պարսից magu . պեհ . mag .
նոր—պարս . خ . մոգպետ . պեհ . magupat ,
mogpet , moypet . موده

16 . յազել — զոհել . պիեստ . yaz , սանսկր .
yaš . yasna « զոհ » , պեհ . yazēm , yazešn .
յաշտ . պիեստ . yešti . պեհ . yašt .

17 . Եաւասարդ . հին Հայոց առաջին ա-
միսը ավեստ . « saredha » տարի : Հին ա-
նունները چو سوار دوسار نوشید պահպանուել են
միայն իրանի հիւսիս—արեւելեան գաւառնե-
րի բնակիչների մօտ (Խվարեղմ , Սօգդիանա) :

18 . Մազդեզն . Ավեստ . mazdayasma ,
պեհ . mazdēm . Հանգուցեալ պրօֆ . Lagar-
de ուսումնականների ուշադրութիւնը հրա-
ւիրեց իրանական ազդեցութեան զանազան
բարդութիւնների վրայ հին Հայոց նիստու-
կացի և լեզուի վերաբերութեամբ : Լագարդը՝
Հայոց լեզուն իրանական լեզու համարելով
հանդերձ , որ այժմ հերթում է , շատ հիմ-
նաւոր կերպով ակնարկում էր այն ազդեցու-
թեան վրայ , որ Պարթեւացիք և Սասանեանց
ժամանակների Պարսիկները գործել էին Հա-
յոց կուլտուրայի վրայ : Լագարդի հարթած
ճանապարհով ընթանում էին , և այլն , ու-
սումնականները : Իւր Persische studien եր-
կասիրութեան էջերում պրօֆ . Հիւրշմանը
խստիւ որոշում է Պարսից լեզուն Պարթե-
ւաց օրերում կամ պեհեւին բառիս բուն
նշանակութեամբ՝ միջին Պարսից լեզուից , որ
գործ էր ածւում Սասանեանց օրերում և
բաւականին մօտ էր Շահնամէի լեզուին : Իւր
միւս գրուածքում՝ I Abtheilung . Die per-
sischen und arabischen Lehrwörter im
Armenischen Leipzig 1895 . Էջ 12-13 . որի
վրայ մենք ոչ սակաւ ակնարկում էինք . Հիւրշ-
մանը շատ հասկանալի կերպով մեկնում է
ձայնական տարբերութիւնը Արշակունեաց և

Սասանեանց օրերի միջին Պարսից բառերի
մէջ, որոնք մտած են Հայոց լեզուի մէջ իբր
փոխառութիւններ: Պարսից տարրերի այս-
պիսի բաժանումն Հայոց լեզուի մէջ այսինքն
արշակունի և սասանեան՝ տարրերի շատ
նշանաւոր է և մեր առարկայի համար: Այդմ
մենք վատահութեամբ կարող ենք ասել, որ
Հայոց Արամազդ, Վահագն, Անահիտ և Տիր
(Տրէ) չաստուածների անունները թէ և խիստ
հայացրած են, չնայելով գոցա ձայնական
կազմութեան, բայց այնու ամենայնիւ, ըստ
իւրեանց ձեւին, պատկանում են այն լե-
զուին, որ տերապետում էր Իրանում, մո-
տաւորապէս, Արշակունեաց հարստութեան
ծագման և քրիստոնէական թուականի սկզբի
միջոցին: Մեզ հասած տեղեկութիւնները բա-
ւականին կցկոտոր են. սակայն թէ դրամնե-
րը և թէ կին հեղինակների ակնարկութիւն-
ները մեզ թոյլ չեն տալիս տարակուսելու,
թէ Զրադաշտի կրօնը Արշակունեաց օրե-

1. Պեհեւը լեզուի բաժանումն արշակունի
և սասանեան շրջանների պէտք է հասկանալ
այն մտքավ, թէ արշակունեան շրջանին վերա-
գրելու է նաև Սելեկացւոց ժամանակի Պարսից
լեզուն, մինչեւ սասանեան ժամանակամիջոցը
ընդգրկում էր, գուցէ, Արաբացւոց առաջին
ամբրապեաների ժամանակիները. Ծան. Հեղ.:

բում ոչ միայն տարածուած էր բուն Իրանի
նահանգներում, այլև ընդհանրացած էր նաև
ոչ արթական ցեղերի մէջ, որոնք ապրում
էին Իրանից դէպի Արեւելք: Նոյն իրողու-
թեան վրայ ակնարկում են Տուրուշկա հա-
րլստութեան թագաւորների դրամները, որոնք
վերաբերում են մեր թուականի առաջին
դարուն: (Ճամ. Stein, Zoroastrian Deities
on Indo-scythian coins: Ibn Khordâdhbeh
վկայում է, թէ IX դարում արդի Թուրքեա-
տանի Թուրքաց ցեղերի մէջ կային մոգու-
թեան հետեւողներ): Մենք գիտենք, որ Պար-
թեաւց Վոլոգէս (Վաղարշ, Վաղարշակ, Բա-
լաշ) թագաւորը քրիստոնէական թուականի
առաջին դարում հրամայեց հաւաքել Ակես-
տայի բոլոր հատուածները, որ զերծ էին
մնացել այն հալածանքից, որ, ըստ Պարսից
աւանդութեան, Ալեքսանդր Մակեդոնացին
յարուցել էր Պարսից սրբազնան մատենագրու-
թեան դէմ: (Gutschmid, Geschichte Irans.
Darmesteter, Le Zend-Avesta III էջ 37.
և այլուր):

Դարձեալ՝ մեզ հասել են ստոյգ ցուցումներ,
թէ Զրադաշտի հետեւողները Սասանեանց
օրերում որպարում էին պարթեաւական հաւա-
տը (dēn-i-pahlavīk) պարսկական կամ սա-

սանական հաւատից (dēn-i-pārsīk): Տեղի էլ 131 հր. Խ. Յովհաննիսեանցի, ուր Հայոց պատմիչը հաղորդում է մեզ մի գեն-պետի մասին, «որ ունէր զՊալհաւիկն և զՊարսկագենն»: Հաւանական է, որ դորան է վերաբերում Ջիրդուսիի մի հատուածը, ուր աւանդւում է Բեհմեն թագաւորի և նորա դստեր ամուսնութիւնը.

پدر در پنیرفتش از نیکوتنی بدان دین کم جوانی و را پهلوتی

Դա նշանակում է «հայրը ընդունեց նորան (իւր կանանցը) բարի դիտաւորութեամբ (bona fide) համաձայն այն կրօնի, որ կոչւում է պահլաւիկ»: Բեհմենի ամուսնութեան մասին իւր դստեր հետ յիշում է նաեւ Տարարի (Հատ. I, էջ 689, 2):

Մերձաւոր ազգականների խնամութեան մասին հին Հայոց մէջ վկայում են Հայոց հին պատմիչները, որոնք բուռն եռանդով մաքառում են զրադաշտական վարդապետութեան և քարոզութեան դէմ: Այդ հեղինակների մէջ առանձին նշանակութիւն ու նին Փ. Բիւղանդի և Եղնիկի ցուցումները. աւ ուախից օգուտ քաղեց յետին ժամանակում:

Ա. Ներսիսի Շնորհալու վարուց հեղինակը: Յիշեալ բոլոր հատուածները քաղուած ու թարգմանուած են գերմաներէն պրօֆ. Հիւրշ-մանի ձեռքով: Մի կողմ թողնելով առ այժմ Եղնիկի վկայութիւնը, որ վերաբերում է բացառապէս Պարսից սնապաշտութեան, առանց յատկացնելու այն Հայաստանին, մէջ բերենք Փաւառուինը - և փախչել աւելի ի մերձաւոր և յաղփին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն (տե՛ս Հրատ. պրօֆ. Փ. Պատկանեանի էջ 64. Ա. Պետերբուրգ 1883): Ա. Ներսէսը յորդորում է Հայերին՝ փախչել մերձաւոր ազգականների և տոհմակիցների ամուսնութիւնից: Սակայն ի նկատի պէտք է առնել այն հանգամանքը, որ թէպէտեւ հին Պարսից մէջ մերձաւոր ազգականների խնամութիւնը գոյութիւն ունէր, անշուշտ, համաձայն հին և նոր պատմիչների վկայութեան, սակայն գիտութիւնը տակաւին չէ բացատրել՝ յիշատակւո՞ւմ է արդեօք այդ սովորութեան մասին Ավեստայում, թէ Այդ հանգամանքը ստիպեց գիտնական Պարսիկաստուրին Peshootan sanjana մերժել իւր «Neet of kin - marriage in old Iran¹» գրուածքում ամուսնութեան գոյու-

թիւնը մօտ աղքականների մէջ հին Պարսկաստանում, չի շատանալով գորանով Պարսի աստուածաբաննը ճգնում էր ապացուցանել, թէ հին մատենագիրների բոլոր վկայութիւնները այս առարկայի մասին անհարազատ են: Բայց մենք յենրով West-ի կարծեաց վրայ (The meaning of Khvêtâk – das or Khvêtâdâd, Pahlavi Teets II, էջ 389–430), կ'ակնարկենք այն հանդամանքի վրայ, որ մինչեւ անդամ նոր Պարսից բանաստեղծութիւնը, որ ծագեցաւ մահմետական կրօնի հաստատուելուց յետոյ Պարսկաստանում, գիտէ ամուսնութեան մասին եղբօր ու քրոջ մէջ (Ֆիրդուսի): Եթէ մենք հնարաւոր անգամ համարենք, թէ Ավետան այդպիսի ամուսնութիւն չէ պատուիրում, պէտք է ի նկատի ունենալ որ Զրադաշտի յեղափոխիչ վարդապետութիւնը ծագեցաւ, հաւանական է կարծել, իրանի արեւելեան կողմերում և բաց ի դորանից գեռ եւս բաւարար եղանակով չէ հաստատուած, թէ Աքեմենեանք դաւանելիս լինէին Պարսից կրօնի զրադաշտական ձեւը: Միւս կողմից այս եւս հարկ է իմանալ, որ եթէ այդպիսի սովորութիւն գոյութիւն ուներ երբ և իցէ այսինքն խնամութիւն մերձաւոր աղքականների մէջ, դա,

անշուշտ, մի առանձին յարատեւութեամբ պիտի պահպանուէր իշխանական տոհմերի մէջ:

Մեղ հասած տեղեկութիւնները իրանական տարրերի մնացորդների մասին հին Հայոց կրօնի վրայ, մեր կարծիքով, ուղղակի ապացուցանում են, թէ դոքա, այն է՝ իրանական տարրերը փոխ են առնուած կրօնի այն ձեւից, որ հաստատուեցաւ Պարսկաստանում Զրադաշտին վերապրեալ կրօնական յեղափոխութեան շնորհիւ: Զրադաշտը ներմուծեց հին իրանացւոց ժողովրդական կրօնի մէջ աւելի որոշ դաւանական – աստուածաբանական տարր: Բայց այդ փոփոխութիւնը հարկաւ տեղի ունեցաւ ոչ առանց դառն ճգանց, ինչպէս կարելի է գուշակել «Գատայ»ի շատ տողերից և պարսի աւանդութիւններից, որ պահպանել են արաբացի պատմիչները (տե՛ս Տարարի I էջ 648): Արդ՝ որովհետեւ Հայոց չեղինակների տեղեկութիւնները ոկազում են միայն առաջին Ասանեանց օրերից: Իսկ մենք, միւս կողմից, շատ սակաւ բան գիտենք, որ պարագաների մասին միայն պարագաներ ամանակ, ուստի մեծ դժուարութեան պիտի հանդիպենք հին Հայոց կրօնի յատկանից բնաւորութիւնը որոշելու խըն-

դրում։ Այնք յատկապէս կարծում ենք, թէ հին Հայոց կրօնը ներկայացնում էր իւր մէջ մազգեղականութեան կամ զրադաշտականութեան հայեցրած ձեւը, յունական և սեմական որոշ խառնուրդով շաղախուած և առաջասարակ Փոքր Ասիայի կրօնական հայեցքներով տոգորված։

Ամենայն մի օտար ազգեցութիւն հին Հայոց կրօնական, հասարակական և մտաւոր կեանքի վրայ ամենայն բանում տեղի էին տալիս իրանականի առաջ. կամենալով ընորոշել յունական և սեմական ազգեցութիւնը նախ քան գիրիստոս Հայոց լեզուն ու աշխարհայեցութեան վրայ, պէտք է միշտ յիշել, որ Արշակունեաց Պարսկաստանի կուլտուրան գտնելում էր յոյն – սեմական քաղաքակրթութեան խիստ ազգեցութեան ներքոյ, որ այդ ժամանակները գերակշռող էր համայն առաջաւոր Ասիայում։ Սակայն մենք կարծում ենք, որ Ասորոց այդպիսի ազգեցութիւնը կարող էր տարածուել Հայաստանում և առանց Պարսից միջնորդութեան և յիշեալ ազգեցութիւնը, ըստ երեւոյթին, նշանաւոր էր Հայոց այն նահանգներում, որոնք սահմանակից էին արամէական երկրներին։

Դարձեալ՝ պէտք չէ մոռանալ, որ հին Հայաստանում ազատանին (նախարարական և իշխանական ցեղերը) ազգութիւն էին կազմում քաղաքական մտքով. իսկ այդ ազատանու հոգեւոր կեանքը տոգորուած էր իշխանական ոգեւոլ. բուն հայ ժողովուրդը իւր երկրի հոգեւոր կեանքն սկսեց մասնակցել միայն քրիստոնէութիւն ընդունելով։

Բնորոշելու համար այն հօր ազգեցութիւնը, որ իրանականութիւնը ունեցել է հայ ազգի վերին գասակարգի վրայ, մենք այժմ գիմենք հայ մատենագիրների տեղեկութիւններին այն անցողական ժամանակի մասին, երբ քրիստոնէութիւնը խիստ պատերազմ էր մզում զրադաշտականութեան դէմ։ Այն ժամանակի քրիստոնէական պատմագիրները, որոնք բարձր էին պահում իւրեանց հաւատի դրօշակը, ոչ սակաւ գանգատում էին, թէ հայ ժողովուրդը յամառութեամբ անձնատուր է իւր նախնեաց հին կրօնին. նոքա ակնարկում էին խոր արմատների վրայ, որ պարսկական կուլտուրան ձգել էր հին Հայոց կեանքը մէջ։

Արդարեւ դժուար չէ հասկնալ, որ Պարսկական մազգեղանց կրօնը, որ քարոզում էր

կեանքի ուրախ տրամադրութիւն և երկնային
բարեաց վայելչութիւն, աւելի հաճելի էր
մինչեւ ծուը իրանացած հայ աւագանու և
Արշակունեաց հայ թագաւորական տան նաև
շակին, քան քրիստոնէութիւնը, որ պահանչ
ջում էր ժուէկալութիւն աշխարհական հաւ
նոյներից և առաջին դարերում կրում էր
իւր վրայ դեմոկրատիքական բնաւորութիւն։
Մէջ բերենք այժմ Փ. Բիւզանդացու պատ-
մութիւնից մեր նիւթին յարմար բնորոշ հայ
տուածեր . «Որք միանգամ զհնութիւն
կռապաշտութեան հեթանոսութեան զնոյն
սովորութիւն մինչեւ ցայնժամ եւս ունէին
գաղտնի » . (Պ. Գ. Պլ. Գ. Էջ 7. Հրատ.
Փ. Պ.) Փոքր ինչ հեռու - «Զի ի վազնջուց,
յորմէ հետէ առին նորա զանուն քրիստո-
նէութեան, լոկ միայն իրրեւ զկրօնս իմն
մարդկութեան յանձինս իրեանց և ոչ չեր-
մեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իրրեւ
զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ» :
«(ibid) Եւզիւրեանց երգս առասպելաց զվի-
պասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթու-
թեանցն, և նմին հաւատացեալք, և ի նոյն
հանապաղորդեալք» : «Եւ զդիցն ճնութեան
պաշտամունս ի նմանութիւն պոռնկութեան
գործոյն ընդ խաւար կատարէին» . (ibid)

«բայց միայն ստկաւ ինչ զհանգամանո գիտէի
հելէն կամ տարի գպրութեանց¹» :

Հին Հայոց այգպիսի հակումն զէպ ի իւ-
րեանց հեթանոսական կրօնը չափագանց իրա-
խուսում էին Պարսից թագաւորները և գրա-
դաշտական մոգերը, որոնց քարոզութիւնը
մեծ յաջողութիւն գտաւ հայ աւագանու մէջ։
Սրբոյն Եկրախի մահից յետոյ, Փաւստոսը,
աւանդում է, թէ «Բազում գաւառք Հայոց
և բազում մարդիկ ի հնութիւն դիւապաշ-
տութեան դարձան, և ընդ բազում տեղիս
Հայոց կուռս կանգնեցին ի համարձակութե-
նէ թագաւորին Պապայ» : Հայ իշխաններից,
որոնք ընդունել էին Պարսից գենը Փաւստոս
թիւզանցին յիշում է Մերուժան Արծրու-
նուն և Վահան Մամիկոննեանին։ Դոցանից
առաջինը «կալւ զօրէնս մազդեզանցն, այս
ինքն, զմոգուցն. եպագ երկիր արեգական և
կրակի, և խոստովան եղեւ՝ թէ աստուածք
այն են, զոր թագաւոր Պարսից պաշտէ» : Այդ-

1. Վերոյիշեալ հատուածները բարոնի յօ-
դուածում մեծ վրեպակներով են բերուած. ուս-
տի հարկադրուեցանք ամենայն անդամ անձամբ
ստուգել այդ բոլորը պո՞փ. Պատկանեանի հրա-
տարակութիւնից. Ծան. Մ., Շ.:

պէս վարվեցաւ և Վահան Մամիկոնեանը, որ «և յանձն առ պաշտել զօրէնս մոգութեան, այսինքն երկիր պագանել կրակի և ջրոյ և արեգական և ուրանալ զօրէնս քրիստոնէութեանն յորում ծնեալն էր» (Էջ 136):

Մերուժան և Վահան շշատացան միայն ընդունելով Հայաստանի թշնամիների կրօնը այլ և «Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և մարդիկ հնագանդէին օրինացն Մազդեզանց, և բազում յիւրեանց սեպհականնն շինէին ատրուշանս, և զորդիս և զազդայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն»: «Եւ ապա» Այնուհետեւ Վահան Մամիկոնեան և Մերուժանն Արծրունի, սոքա երկոքեան արք պիղծք անօրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ աստուածպաշտութեանն, և զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետեւ յերկին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս ազոթից քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց՝ գաւառաց և կողմանց կողմանց (Էջ 451):

Եղիշէի պատմութիւնից մենք տեսնում ենք, որ տակաւին հինգերորդ գարում Սիւնեաց իշխան Վասակը ջատագով էր հանդիսանում մոգութեան Հայերի մէջ նա – «ոչ ի բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ըստ

ներքին խորհրդոցն իւրոց » (տե՛ս . Հրատ. Խ. Յովհաննէսեանցի էջ 69):

Փաւստոս Բիւզանդացին վկայում է՝ թէ Արշակունեաց հարստութեան թագաւորների մէջ եւս չորրորդ գարում պահպանուել էր հակումն թէպ ի իրանց իրանացի նախնեաց կրօնը: Այսպէս, ըստ աւանդութեան, Փառանձեմ թագուհին, Արշակի կինը, իւր Պապորդուն ծօնեց գեւերին, երբ ծնաւ. «Եւ եղեւ իրբեւ ծնաւ զնա մայրն իւր, քանզի անօրէն մարդ էր և ամենեւին յԱստուծոյ ոչ երկնչէր, նուիրեաց զնա գիւաց. և բնակեցին գեւք բազումք ի մանուկն» (Էջ 132 Հր. Պատ.):

Պապի ծօնման աւանդութիւնը առիթ է տուել Փաւստոսին յերիւրել հետեւեալ պատմութիւնը. «Վասն զի հանապազ զկամս դիւաց առնէր, զաման այսորիկ և զրժշկութիւն իսկ ոչ կամէր զտանել. զի հանապազ վարձէր զանձն իւր գիւօք, և կախարդանօք երեւէին գեւքն ի նմա. և ամենայն մարդ զգեւսն ի նմա աչօք բացօք տեսանէին: Զի յորժամ մարդիկ հանապազօք յայգորել եւ լեալ մտանէին, տեսանէին՝ զի յօձից կերպարանս եւանէին ի ծոցոյն Պապայ թագաւորին, և պատէին զուսօք նորա. (Էջ 180 Հր. Պատ.):

Փաւստոսի այս հետաքրքիր պատմութիւնը
Հայոց Պատ թագաւորի ձօնման մասին օձա-
կերպ հրէշներին, մեր կարծիքով, յիշեցնում
է Պարսից աւանդութիւնը Պոհակի մասին,
որ սոյն գէպօւմ յարմարացրած է Պապին:

Յիրգուսի. از کتفش برسست مار میاس و د
« Երկու սեւ օձեր բուսան նորա ուսերից »:
Հայերէն պատմուածը աւելի հետաքրքիր
էր այն պատճառով, որ բղխում է քրիստո-
նէական աղքիւրից: Դա, ըստ երեսյթին,
վկայում է թէ պարսկական վիխասանական
նիւթերը խիստ ազգել են հին Հայոց երեւա-
կայութեան վրայ: Եղնիկը զրադաշտական-
ներին ուղղակի կոչում է դիւապաշտ:

Հայոց Արշակունի թագաւորների այդպի-
սի հակումն դէպ ի իւրեանց կրօնը ունէր
նաեւ քաղաքական նպատակ: Հայոց Արշա-
կունիք համարելով Ասանեանց թագաւոր-
ներին ինքնականներ, ձգտում էին զրաւել
Արքայից Արքայի գահը¹ իրանում, իրեւ-

1. Տես Պատմ. Ա. Խորենացու զր. Ա. Ա.
ԺԱ. այսինքն « Արտաշէս թագաւորէ Հայոց...
և յառաջադէմ եղեալ, ոչ վերկրսրդական ունի
դահ, այլ զաւագութեան թեկն ածէ »: թէեւ,
կը նկատենք մեր կողմից, Պարսից Արշականը
Արշակունեաց ցեղից էր: Ա. Շ.:

իւրեանց բնիկ նախնեաց աթոռը: Ինքն ըստ
ինքեան համկանալի է, որ « արքայական
մեծութիւնը » իրանի Ա. Վ. կարող էր
միայն յատուկ լինել բուն զրադաշտական
կրօնի դաւանողին, ապա ուրեմն, քրիստո-
նէութիւն ընդունելուց յետոյ Հայոց թագա-
ւորները էլ այնուհետեւ չէին կարող երեւա-
կայել իւրեանց բաղձանքի իրազործման մա-
սին խիստ զրադաշտական Պարսկաստանում
Սասանեանց օրերում: Այս փափաքը Հայոց
թագաւորների մանաւանդ արտայայւում է
Հայոց Արշակ թագաւորի խօսքերով, երբ նա
հանդիպում է Պարսից Շապուհ թագաւորին
« Ի բաց կաց յինէն ծանաց չարագործ տի-
րացեալ տերանցն քոց, այլ ոչ թողից զքեզ
և որդոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և
զմահն Արտեւանայ արքային »: (Պատմոս
Բիւզանդ Էջ 142 Հը. Պատկան.): Նոյն փա-
ռասէր ձգտումները վերագրում է Տիրանին
նորա սենեկապետ Փիսակը, որ գաւաճնում
է նորան Արտրպատականի իշխան Վարագի
առաջ, « ասելով, թէ՝ խորհի հանել զթագա-
ւորութիւն Պարսից յազգին Ասանայ. զի
ասէ, թէ մեր լեալ է և հարցն մերոց այն
տէրութիւն: Արդ ասէ, թէ չեմ ծուզալոց՝
մինչեւ դարձցի պատիւ հարցն նախնեաց .

զնախնի զթագաւորութիւնն այօրէն եւս որդի
և առ զաւակ նոցա յազգս իմ և ի տունս
իմ և յանձն իմ դարձուցանեմ » . (ibid.)
դարձեալ « տային հրաման . . . զի նեղեցեն
զնոսա՝ դարձուցանել յօրէնս Մազդեզանց .
եթէ ոչ առնուցուն յանձն, սատակեացեն զա-
մենեսեան չարաշար » (ibid.) :

Հայոց և Պարսից ազգերին յատուկ հա-
ւատալեաց ու սովորութիւնների կարգին, որ
կապուած են կրօնական կեանքի հետ, դա-
սելու է նաեւ չար աչքի ներդործութիւնը և
կախարդելու խոտերի գործածութիւնը սիրոյ
կրքերը բորբոքելու համար : Աակայն այդ սո-
վորութիւններին և անապաշտութիւններին,
որոնք տարածուած են նաեւ ուրիշ ազգերի
մէջ, մեծ նշանակութիւն չէ կարելի տալ :
Միայն մեր ասեելիքը լրացնելու նպատակով
մենք մէջ կ'բերենք այն տեղեկութիւնները,
որ յաջողեցանք քաղել Հայոց և պեհեւի
զրականութիւնից :

Զար աչքի ազգեցութեան մասին Ա. Խո-
րենացին էլ յիշում է, վերագրելով այդ յատ-
կութիւնը Հայոց Երուանդ թագաւորին¹ (գլ.

1. Ինչպէս տեսնում է ընթերցողը, յարգելի
բարսն Շատակէլերդ դարձեալ ակամայ դիմում
է բազմաչարչար Խորենացու հեղինակութեանը .

II. զլ. 42): Բունդեխելի ակնարկներին նա-
յելով, որ շատ յաճախակւում է,
նաեւ Պարսից հնագոյն բանաստեղծութեան
մէջն եւս չար աչքի ներդործութիւնը մեծ
գեր էր կատարում պարսկական ժողովրդի
կեանքում¹ : Հմայելու խոտերի մասին հին
Հայոց մօտ տես Ա. Խորենացու զր. I. զլ.
30, Փ. Պատկանեանին նիւթեր Հայոց բառ-
զրքի համար Խալաթեանց – WZKM 1893 թ.
Էջ 27. Lagarde, Gesammelte Abhandlun-
gen. Դուրբովին – Ուսուաց պատերազմի և
Տիրապետութեան պատմութիւնը Կովկասում
Հատ. I. Էջ 527:

Թէեւ չէ վստահանում համարձակ քաղուած-
ներ բերել նորա Պատմութիւնից, այլ միայն
ակնարկում է դրքի և գլուխ վրայ : Բայց որով-
հետեւ գս մի գաղտնիք չէ, մինք վստահու-
թեամբ մէջ կ'բերենք Խորենացու վկայութիւնը
որ հետեւեալն է . « Բայց ասեն զերուանդայ՝
ըստ հմայից գմնեայ գուլով ական հայեցուածով .
վասն որոյ ընկ այգանալ աշւլը շացն սովորու-
թիւն ունել սպասաւորաց արքունիկ վեմս որ-
ձաքարեայս ունել ընդգեմ Երուանդայ, և ի
հայեցուածոցն գմնութենէ՝ ասեն պայթել որ-
ձաքար վիմացն» : Եթէ բարոնը բաղմաթիւ քա-
ղուածներ է բերում Փ. Բիզզանդացու Պատ-
մութիւնից, անաչառութիւն չէ լոելեայն անց-
նել Խորենացու վկայութիւնները : Ա. Շ. :

1. Զար աչքը պարսկերէն կոչում էր ԱՅ քահա-

Մերթ բազէներով որսում եմ կաքաներ
ու դշխայահաւեկը».

Մենք գիտաւորութիւն չունինք սոյն յօ-
դուածում հետազօտել իրանական ազգեցու-
թիւնը հին Հայոց քաղաքական կեանգում,
թէ և այդ ազգեցութիւնը, անշուշտ, շատ
նշանաւոր էր։ Աւատական կազմակերպու-
թիւնը, պալատական կարգ ու կանոնները,
քաղաքական և զինուորական կեանգը հին
Հայստանում, կենաց այդ բոլոր կողմերը
կրում էին իւրեանց վրայ Պարսից հզօր աղ-
դեցութիւնը։ Սակայն մենք գարձեալ պիտի
կրկնենք, որ մեզ մատչելի աղբիւրները մեզ
հնարաւորութիւն են շնորհում դատել միայն
հին Հայոց նախարարների և իշխանների մասին
միայն։ Հասարակ ժողովրդի մասին մենք շատ
քիչ բան գիտենք։ Բայց կարելի է ենթա-
դրել, որ Հայոց գուհիկ ժողովրդի մէջ իրա-
նական ազգեցութիւնը աւելի թոյլ էր, քան
թէ բարձր գասակարգի հասարակութեան։
Մեզ թաւում է, որ քրիստոնեայ հոգեւորա-
կանութեան գործունէութիւնը, որ արթնա-
ցրեց ազգային ինքնաճանաշութիւնը նշանա-
գրերի գիւտով և զալրութեան զարգացմամբ,
իւր հաստատուն նեցուկը գտաւ սուն ժողո-
վըրդի մէջ, որ պակաս մատչելի էր իրանի

Հին Հայոց նախկին իրանական կրօնի հետ
գուցէ սերտ կապ ունի Հայոց նախարարների
առանձին հակումն որսորդութեան, որպէս
տեւ զրադաշտական օրէնքը պահանջում էր
ոչնչացնել վայրենի գաղաններին, կենդանի-
ներին ու միջատներին։ Թագաւորաց մատե-
նում (Շահնամէ) և Պարսից այլ մատե-
նազրական յիշատակարաններու որսորդու-
թիւնը շատ նշանաւոր գեր էր կատարում
թագաւորների և մեծաւորների կեանքում։
Մեջ բերենք Պ. Փարակեցու Պատմութիւնից
մի հատուած, ուր խօսում է նախարարների
որդուց մասին, որոնք թաշուններ էին որոսւմ
բազէների օգնութեամբ . . « զայլ և այլ սեսս
ի թաշուն որսացեալ բաղայիւք » (տես . էջ
27. Վեն. 1873 թ.)¹, Գուրզանի « Վիսա
օ Ռամին » վիզասանութիւնից էջ 231 .

کهی کیزرم بم یوران عزم و آهو
کهی کیزرم بم بازان کبدک و تیجهو

« Մերթ յովազներով ես որսում եմ վայրի
քօշեր ու այծեամներ .

1. Որսորդութեան վերաբերեալ օրինակներ
պակաս չեն նաեւ Ա. Խորենացու և մեր միւս
մատենազիւների մօտ էլ, ի՞նչ կարիք կայ միայն
Պ. Փարակեցու վրայ ակնարկելն։ Ա. Ն. :

ազդեցութեանը : Յարուցաննելով բնակչութեան մէջ ազգային ինքնուրոյնութեան զգացմունքը, քրիստոնէական շարժումն մի և նոյն ժամանակ ժողովրդի սրտերին ներշնչեց գարշանք դէպի Պարսից կրօնը : Կրօնական հայեացքների այդպիսի փոփոխութեան համար գեղեցիկ լուսաբանութիւն կարող է լինել Պարսից գերիների այրումն, որ տեղի ունեցաւ Հայոց յաղթող Մուշեղ սպարապետի հրամանով . « Իսկ զՄազգեզունսն, որ միանգամ ի բուռն արկին, զամեննեսեան տայր հրաման սպարապետն Մուշեղ ունել և հրովարովել » . (անհ էջ 157) :

Կրակի այսպիսի սրբապղծութիւնը՝ մէջը դիտակներ նետելով Պարսից մօտ շատ ծանր մեղք էր համարւում։ Եսոյնը կամենում էին կատարել նաև Տուրքացիք, սպառնալով այրել Ռուսատեմի մարմինը (Ֆիրգուսի էջ 978, 298).

تمش را بس ریم و جاکسترش
همی نر فشا ذیم پیدش درش

Նորա մարդինը մենք կ'այրենք . իսկ աճիւնը
կը ցանենք նորա գոների առաջ :

Վերջացնելով մեր յօդուածը մենք կարդա-

յինք Բ. Gelzer-ի համար առաջարկութեանը : Քննելով մեզ հասած տեղեկութիւնները հին Հայոց հեթանոսական կրօնի մասին, Ենայի Համալսարանի ուսուցչապետը այն եղբակացութեան է գալիս, թէ նորա մէջ նշմարելի են քառեակ տարրեր, այն է՝ իրանական, սեմական, բուն հայկական և յունական, ինչպէս իւրժամանակին նկատել էր և հանգուցեալ Մ. Էմինը : Պրօֆ. Գելցերը, Հարկաւ, լիովին ընդունում է իրանական կուլտուրայի խոր և բազմակողմանի ազգեցութիւնը Հայոց հին կեանքի վրայ . բայց խօսելով Հայոց հեթանոսական կրօնի մասին, նա դորա մէջ տեսնում է միայն իրանական տարրի խիստ նկատելի գոյութիւնը հին Հայաստանի հաւատալեաց վերաբերութեամբ : Յենով Մովսէս Խորենացու վկայութեան վերայ - կասկածելի վկայութեան . (յարում է իւր կողմից թերահաւատ բարոնը), Պարսից Արտաշեր թագաւորը « զանգրիսն զոր արար Վաղարշակ պատկեր իւրաց նախնեացն հանդերձ աշերեգակամբ և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեցաւ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ, զայնոսիկ փշրէ » (տե՛ս Պր. II. զԼ. 774) ¹ :

1 . Այս քաղաքածքը Խորենացու Պատմութիւնից մեր մէջ բերածն է . Մ . Յ . :

Զրադաշտականութեան այս մոլեռանդ ջաշատագովի վարմունքից, Գեղերի կարծիքով, կարելի է զուշակել, թէ մեծ տարբերութիւն կար Պարսից և Հայոց կրօնի մէջ. Հայոց բազմաստուածութիւնը, տառում է պրօֆ. Գեղերը, չնայելով իւր խիստ իրանական տարերին, որոնք շատ գէպերում ենթարկուելով փոփոխութեանց հայացրած էին, մազդեղական արքային զուտ կուսակաշտութիւն պիտի երեւէր: Մենք ի նկատի պէտք է առնենք (Եթէ միայն գործ ունինք այստեղ պատմական արժանաւաւատ իրողութեան հետ), որ Հայոց թագաւորների նախնեաց, արեգական և լուսնի անդրիների վշրումն Արտաշրե կողմից կարող էր լոկ քաղաքական նորատակ ունենալ: Յիշեցնում ենք ընթերցողին, որ Մեծն Աղեքսանդրն եւս տիրելով Աքիմենեանց Պերսեպոլիս մայրաքաղաքին՝ արքայական պալատը հրոյ ճարակ գարձրեց: Աղեքսանդրի այս վարմունքի մէջ պրօֆ. Nöldere գիտաւորեալ խորհուրդ է տեսնում, որ պիտի ազգէր Պարսից մտքերի վրայ, որովհետեւ արքայական ապարանքների հրկիզումն համոզելուէր Պարսիկներին, թէ նոցա թագաւորութիւնը խսպառ կործանուեցաւ և նոցա միակ հրամանատարն այժմ Աղեքսանդրն է: Մեր

կարծիքով սոյն դիտաւորութեամբ առ աջնորդւում էր նաեւ Արտաշիրը, վշրելով Հայոց թագաւորների, արեգական և լուսնի արձանները (Տես Գր. Խալաթեանց). Հայկական վէպ. էջ 298-299), Քննելով Արամազդի յատշկանից բնաւորութիւնը և դրութիւնը Հայոց պանթէօնում, պրօֆ. Գեղերը նկատում է, թէ, աշքի առաջ ունենալով Հայոց Արամազդի և Ավեստայի Ահորօ-Մազծօ-ի մէջ եղած մեծ տարբերութիւնը, առաջինը բովանդակում է իւր մէջ բռն, հին Հայոց չաստուածների հօր յատկութիւնների գուգաւորութիւնը իրանական երկնային չաստուածի հետ: Իւր կարծիքը պրօֆ. Գեղերը հիմնում է Ագաթանգեղոսի վկայութեան վրայ, որ Արամազդին կոչում է՝ թագաւոր համայն չաստուածների: Վերը մենք արդէն ակնարկեցինք այն բանի վրայ, թէ այսպիսի կարծեցեալ խարութիւնը բացատրում է այն հանգամանքով, որ Ագաթանգեղոսը – ինչպէս ենթազրում է Գուտշմիդը – կամ Զրուանին փոխարիներ է Արամազդով, կամ սոյն դէպքում յունաց դիցաբանութիւնը յարմարացրած է Հայոց պանթէօնին: Պարձեալ դասնալով Հայոց Անահիտ դիցուհու վերլուծութեանը, Գեղերը կարծում է, թէ այս դիցուհու պաշտօ-

նատարութեան մէջ Հայաստանում տեղի են ունեցել նշանաւոր փոխութիւններ, պայն մասնագրուած սեմական աղքեցութեամբ : Բայց չը որ ավեստական դիցուհին Առահիտա նոյնպէս սեմական ծագումիցն է յառաջացած : Խօսելով Անահաւի պաշտօնատարութեան մասին Բագաւանում պ . Գելցերը շարունակում է — « գա մեկնուում է այն իրողութեամբ, որ այս դիցուհին յետոյ մտաւ երեք բարձրագոյն շաստուածների — պահպանողների գասը, իբր Հայաստանի — pénates publici՝ Արամազդ, Անահիտ, Վահագն, որ երեւում է Տրդատ թագաւորի հրովարտակից : Մեր կարծիքով՝ հազիւ թէ անահիտին յետին ժամանակներում մացրած լինին բարձրագոյն շաստուածների (Արամազդի և Վահագնի) շարքը . մենք յենւում ենք պրօֆ, Nöldkeke-ի վրայ, որի կարծիքով բարելոնեան համաստեղութեան — շաստուածների Bēl, Bēlti, Nērgal, Nēbo անունները Պարսիկները համեմատաբար ուշ փոխարինեցին համապատասխան իրանական շաստուածների անուններով՝ Hormizd (Հայոց-Արամազդ), Nahēdh (Հայ . Անահիտ), Bahram (Հայ . Վահագն), Sir (Հայ . Տրէ) : Այսպէս՝ այս չորս շաստուածներին հին իրանի գլխաւոր

շաստուածներ համարելու է, ապա ուրեմն նաեւ Հայաստանի, որովհետեւ գոքա յիշում են Հայոց պանթէսնում եւս :

Ապա խօսելով ասորական ծագումից յառաջացած շաստուածների մասին պրօֆ . Գելցեր կարծում է, թէ և տասի փոխուիլն Ի՞արշամ, Բարշիմնիա շաստուածի անուան մէջ՝ ակնարկում է իրանական ծագումի վրայ : Աստղիկ դիցուհու անուանը գալով, պրօֆ . Գելցերը համաձայն է Հօֆմանի կարծեաց հետ, որ այդ անուան մէջ տեսնում է ասորական եակաբտա բառի թարգմանութիւն որ է « աստղիկ » :

Չուտ հայկական շաստուածների շաբքում պ . Գելցերը դասում է Վանատրին, որին յիշում է Ագաթանգեղոսը, դժբաղդաբար շատ մութ հատուածում : Գելցերի կարծիքով արեգական և լուսնի երկրպագութիւնը, որի մասին Մ . Խորենացին էլ աւանդում է, շատ հին ժամանակից յատուկ էր Հայոց : Վերջապէս զերմանացի զիտնականը, յենլով գարձեալ Մ . Խորենացու վկայութեան վրայ, Յունաց աղքեցութեանն է վերագրում հեթանոս Հայոց մեհեանների մէջ շաստուածների պատկերներ ու արձաններ կանգնելու սովորութիւնը :


Այսպէս, ուրեմն, ալով. Գեղերը Հին
Հայոց հեթանոսական հաւատալիքները, նո-
րան մատչելի բնագիրների զօրութեամբ,
խառն կրօնական սիստեմ է համարում, որ
իւր վրայ ցոլացնում է չորս կուլտուրական
շրջանների ազգեցութիւնը և գոյա մէջ հզօ-
րագոյնը, ըստ Գեղերի, իրանական տարրն
է:

Մենք մեր առյն յօդուածում, կնքում է
բարոն Շտակէլբերգը¹ իւր խօսքը, աւելի
հեռու ենք գնում, զին Հայոց կրօնի կորիզը
իրանական համարելով: Այս խնդրում պրօֆ.
Գեղերի գեղեցիկ և հետաքրքիր յօդուածը
չկարողացաւ խախտել մեր կարծիքը:

1. Լազարեան ձեմարանի Պարսից լեզուի
դասասուն է: Մ. Շ.:

Վ. Ե. Պ. Զ.





ՀՀ Ազգային գրադարա



NL0375885

64,760